

Գանատայի մօտ Հայաստանի
Հանրապետությանն նորանշանակ դեսպան
Լեւոն Մարտիրոսեան
իր հաւատարմագրերը յանձնեց
Գանատայի ընդհանուր կառավարիչ
Տէյվիտ Շոնաթընին



Սեպտեմբեր 12-ին, Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Լեւոն Մարտիրոսեան, Գանատայի հայ համայնքը ներկացնող պատուիրակության մը ընկերակցութեամբ Քեպէք քաղաքին մէջ կայացած յատուկ արարողութեան մը ընթացքին իր հաւատարմագրերը յանձնեց Գանատայի ընդհանուր կառավարիչ Տէյվիտ Ճոնսթրինին:

Դեպքան Մարտիրոսեան ծնած է 1976-ին Երեւանի մէջ: 1997-1999 ծառայած է ՀՀ բանակին մէջ:

1997-ին աւարտած է Երեւանի պետական համալսարանի իրաւաբանական բաժանմունքը եւ ստացած իրաւագէտի կոչում: 2002-ին աւարտած է Միծն Բրիտանիոյ ինքնիշխան համալսարանի իրաւաբանական բաժանմունքը: Ունի միջազգային իրաւունքի մագիստրոս:

2007-ին նշանակուած է ՀՀ վարչապետի օգնական: 2008-2012 եղած է ՀՀ նախագահի օգնական:

2012 թվականին Մայիս 6-ին ՀՀ ԱԺ պատգամաւոր ընտրուած է համամասնական ընտրակարգով Հայաստանի Հանրապետական կուսակցութեան ցանկով: Ամուսնացած է, ունի երկու զաւակ:

ՀՀ ներազգահի Յուլի 12-ի հրամանագրով նշանակուած է Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ յիշգոր դեսպան:

**70 երկիրներէ 1500 ներկայացուցիչներու
մասնակցութեամբ սկիզբ առաւ
Հայաստան-Սփիւռք 6-րդ Համաժողովը**



Կարդալ էջ 4

**ՀՅԴ Գանատայի Երիտասարդական
Միությունն անդամները մաքրեցին
«Յիշատակի Պուրակ»ը**



Կարդալ էջ 5

2017

CR-V

STARTING FROM

\$26,890*



Image for illustration purposes only.

HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777

www.hondagabriel.com

< OPEN SATURDAYS >

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobasarian


HONDA

*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.



2173 Ste-Catherine O,
Montréal, QC H3H 1M9
(514) 933-4747

2425 boul. Curé-Labelle,
Laval, QC H7T 1R3
(450) 978-2333

8880 boul. Leduc,
Brossard, QC J4Y 0G4
(450) 656-9595

7250 Boul. Des Roseraies,
Anjou, QC H1M 2T5
(514) 493-6667

2001 Sauvé O,
Montréal, QC H4N 3L6
(514) 382-8606

4601 boul. Des Sources,
Roxboro, QC H8Y 3C5
(514) 685-5050

3100 boul. Thimens,
Montréal, QC H4R 0C9
(514) 904-6789

2655 ave. des Aristocrates,
Laval, QC H7E 0H3
(450) 665-8801

225 Rue Peel
Montréal, QC H3C2G6
(514) 905-6499

1240 Ave Eglinton O,
Mississauga, ON L5V 1N3
(905) 363-0707

20 Ashtonbee Road
Scarborough, ON M1L 4R5
(416) 642-1515

www.groupeadonis.ca
Suivez-nous !



Արամ Ա կաթողիկոսին պատգամը՝ Հայաստան-Սփիուք 6-րդ Համաժողովին

Կը գտնուինք մեր պատմութեան մէկ վճռադրոշմ խաչմերուկին դիմաց: Եկէք ըլլանք իրապաշտ ու անկեղծ: Հայաստանը կը պարպուի, իսկ Սփիւռքը կը մաշի: Այս վտանգալից իրականութեան դիմաց պատահական նախաձեռնութիւններ չեն կրնան մեր տագնապները լուծել եւ վէրքերը դարմանել: Ժամանակի նշաններէ պէտք է ճիշդ կարդալ, ախտաճանաչումը պէտք է ճիշդ կատարել եւ համապատասխան կողմնորոշումներ ճշդել ու ազդու միջոցներու դիմել: Անհրաժեշտ է Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը դուրս բերել պատահական տնտեսական ներդրումներու ու թուրիստական այցելութիւններու շրջագծէն եւ գայն դարձնել մեր ազգային քաղաքականութեան կարեւոր հիմքերէն մէկը: Ամբողջական Հայաստանի տեսլականը ունենալով մեր ազգային գաղափարախօսութեան հենքը ու նպատակը, ՀԶՕՐ ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՄՈՒՐ ԱՐՑԱԽ ու ԿԱԶՄԱԿԵՐՊ ՍՓԻՒՌ պէտք է դառնան մեր ազգային քաղաքականութեան ռազմավարական ու մարտավարական ուղեցոյցը: Ազգային այս գաղափարախօսութեամբ ու տեսլականով ամրագրուած ազգային քաղաքականութիւնը անկասկած իր շուրջ պիտի համախմբէ մեր ազգին բոլոր զաւակները, մարդուին ու ներուժը, միաժամանակ մղիչ ուժը դառնալով համահայկական մտածողութեան կազմաւորման ու գործելակերպի զարգացման:

Շրջափակումի ենթարկուած Հայաստանը պատերազմի մնայուն վտանգին դիմաց է: Արդ, Հայաստանի անվտանգութիւնը համազգային առաջնահերթութիւն է, եւ սա առաջին հերթին կը պահանջէ հայրենի մեր ժողովուրդին ամուր կապուածութիւնը իր հողին: Հայրենիքը հող ու ժողովուրդ է՝ պետութիւն ու տնտեսութիւն ըլլալէ առաջ: Հաւատարմութիւն հայրենիքին նկատմամբ վեր է ամէն տեսակ նկատումներէ: Հետեւաբար, անհրաժեշտ է եւ անյետաձգելի՝ արտագաղթը նուազեցնելու եւ Հայաստանի բնակչութեան թուային աճը ապահովելու ձգտող քոնքրէթ միջոցներու կիրարկումը: Հարկ է ըլլալ զգոյշ: Եթէ Հայաստանի տնտեսութեան զարգացումը ընթանայ համրաքայլ եւ փտածութեան առաջը առնելը դառնայ դժուար, եւ միւս կողմէն՝ եթէ ժողովուրդի կենսամակարդակը չդառնայ գոհացուցիչ, ար-

տագաղթը նոյն թափով կրնայ շարունակուիլ եւ աղքատութիւնը դառնալ աղբիւր ամէն տեսակ ընկերային ու բարոյական չարիքներու:

Հայաստան եւ Սփիւռք սոսկ գործընկերներ կամ գործակիցներ չեն սովորական առումով, այլ՝ նոյն ազգի ու հայրենիքի գաւակներ: Այս հայեցակէտով պէտք է ծրագրուի ու հունաւորուի Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը: 27 տարիներու ընթացքին մեր ժողովուրդի երկու հատուածներուն միջեւ զարգացած կապերը, իրենց դրական թէ՛ բացասական երեսներով, մեզ պէտք է մղեն տարբեր որակ ու արեւելում տալու մեր գործակցութեան: Տեղաքայլը նահանջ է, իսկ նահանջը արտօնելի չէ տագնապներով ու մարտահրաւէրներով շրջապատուած մեր ազգին ու հայրենիքին համար:

Սրբիլի՝ հայորդիներ, Հայաստանը զբօսավայր չէ՝, պիղնեսի չուկայ չէ՝, անցագիր չէ՝. վա՛յ մեզի երբ միայն այսպէ՛ս մօտենանք Հայաստանին: Հայաստանը աշխարհի վրայ ինքզինք հայ դաւանող հայուն տո՛ւնն է՝ անցեալի, ներկայի ու ապագայի տունը: Մեր հաւաքական տան նկատմամբ ընելիք ու ըսելիք ունինք եւ պէտք է ունենանք: Պիտի հօրացնենք ու ծաղկեցնենք Հայաստանը մեր ողջ կարողականութեամբ: Սա իւրաքանչիւր հայուն սրբազան ուխտը պէտք է դառնայ:

Արդ, մէկ կողմէն՝ բարեսիրական գործերով եւ միւս կողմէն՝ «եկէք պիղնես արէք» ըսելով, որքան ալ գնահատելի ըլլան նման նախաձեռնութիւններ ու կոչեր, չենք կրնար հօգօր Հայաստան կերտել: Սփիւռքը պատահական ներդրումներէն անդին կոչուած է լայնածաւալ ու երկարաշունչ ծրագիրներով մասնակից դառնալու Հայաստանի տնտեսութեան աճման: Սփիւռքի տնտեսական ներուժի արդիւնաւէտ օգտագործումը եւ Հայաստան-Սփիւռք գործակցութեան ծաւալումը կ'ենթադրէ գործակցութեան տիւրամիք մեքանիզմներու ստեղծում՝ համաշխարհայնացած տնտեսութեան ընձեռած լայն միջոցներու օգտագործումով:

Սակայն Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը միայն տնտեսական շրջագծէն ներս պէտք չէ դիտել: Սփիւռքի դերը Հայաստանի նկատմամբ սոսկ պիղնես ընել չէ: Սփիւռքը մասնագիտութեամբ թրծուած հարուստ փորձա-

նութիւն է. Սփիւռքը պահանջատիրական ոգիով շաղախուած երիտասարդութիւն է. Սփիւռքը բազմաթիւ ու բազմազան կարելիութիւններով օժտուած հարուստ շտեմարան է: Սփիւռքը անբաժան ու անբաժանելի մասն է հայութեան: Հետեւաբար, տնտեսական, մշակութային, կրթական եւ այլ մարզերէն ներս ծրագրուած գործակցութեան կողքին, անհրաժեշտ է նաեւ լրջօրէն մտածել Սփիւռքի փորձագէտները ու մասնագէտները Հայաստանի կառավարման կառոյցներուն գործնապէս մասնակից դարձնելու միջոցներուն մասին: Այս մօտեցումով միայն Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը իր լիարժէք իմաստը կը ստանայ:

Արցախը, բնականաբար նաեւ Հայաստանը, կը գտնուին ոչ պատերազմ եւ ոչ խաղաղութիւն իրավիճակի մէջ: Այս անորոշ կացութեան երկարաձգումը լուրջ վտանգ մըն է Հայաստանի համար: Թերեւս այսպէ՛ս կ'ուզեն թէ՛ մեր բարեկամները եւ թէ՛ ոչ-բարեկամները՝ մեկնելով շրջանի իրենց աշխարհաքաղաքական շահերէն: Մեր դարաւոր պատմութիւնը կը վկայէ, թէ՛ ազգին ու հայրենիքին փրկութիւնը մեր հաւաքական ուժին մէջն է եւ մեր հաւաքական ուժին ու վճռակամութեան հարազատ արտայայտիչը հայոց արի բանակն է: Իւրաքանչիւր հայ զինուոր մըն է հայոց բանակին. զինուոր՝ նւթապէս նեցուկ դառնալով անոր զօրացման եւ ի պահանջալ հարկին՝ իր արիւնը թափելով ի խնդիր հայրենիքի պաշտպանութեան:

Սփիւռքի վերականգնակերպումը Հայաստան-Սփիւռք գործակցութեան առաջնահերթութիւններէն մէկն է: Ըսած ենք ու կը կրկնենք.՝ Սփիւռքի հօրացումը Հայաստանի հօրացումն է, եւ՝ փոխադարձաբար: Հարկ է ըլլալ իրատես ու հեռատես: Եթէ բազմերանգ ու բազմաշերտ դարձած Սփիւռքը իր ներուժի ներդաշնակման առաջնորդող հաւաքական ուղեգիծը չճշդէ, հետզհետէ պիտի ընթանայ դէպի կազմալուծում ու մաշում:

Հայաստանը կարեւոր դեր ունի կատարելիք Սփիւռքի հայօրէն վերականաւորման, յատկապէս մշակութային ու կրթական մարզերէն ներս, ինչպէս նաեւ ազգային միասնականութեան ամրապնդման գծով: Արդարեւ, Սփիւռքի հայերուն քաղաքացիութիւն շնորհելը

կարեւոր քայլ մըն էր:

Լուրջ տագնապի մէջ գտնուող գաղութի մը, օրինակ Սուրիոյ հայութեան նկատմամբ Հայաստանի պետութեան ցուցաբերած քաղաքական եւ մարդասիրական աջակցութիւնը այլապէս կարեւոր քայլ մըն էր: Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի հռչակագիրը պատմական նշանակութիւն ունէր: Անհրաժեշտ է մէկ ազգի ու հայրենիքի պատկանելիութիւնը ամրագրող քոնքրէթ նախաձեռնութիւնները շարունակել նոյն ոգիով ու յանձնառութեամբ: Հայաստանի առաջին հանրապետութեան 100-ամեակի համահայկական նշումը, վստահաբար նոր շէշտ պիտի տայ մեր ազգային միասնականութեան: Եւ աւելի՛ն, փոխադարձ զիջումներով միացեալ ուղղադրութեան հաստատումը, արեւմտահայերէնի պահպանութեան գծով Հայաստանի պետութեան զօրակցութիւնը անկասկած պիտի դառնան մեր միասնականութեան ամրակուռ սիւները:

Սակայն չմոռնանք երբեք, որ ազգ մը միացնողը, ամրացնողը ու յաւերժացնողը իր հոգեւոր, բարոյական, մշակութային ու ազգային արժէքներն են: Հետեւաբար, թոյլ չտանք, որ մեր ազգին արժէքները ապականին, մեր արժէքներու համակարգը խախտի: Արդարեւ, մեր ազգին մտահոգութիւնները ու կարելիութիւնները լուրջ քննարկումի ու համակարգումի ենթարկող եւ ազգային միասնականութեան տեսանելի արտայայտութիւն տուող Համազգային Նորհրուդի մը ստեղծումը կը նկատենք անյետաձգելի հրամայական:

Այսօրը ծրագրել կը նշանակէ վաղը երաշխաւորել: Ազգին տան հիմքը ամրացնելը կ'ենթադրէ ազգին բեկորները ի մի խմբող վստահութիւնը ամրապնդել ու ներուժը զօրաշարժի ենթարկել: Այլապէս սոսկ լողունդներ հնչեցնելով փակ օդակներու մէջ պիտի մնանք: Զվստահինք աշխարհաքաղաքական շահերով պայմանաւորուած ուրիշներու բարեկամութեան: Վստահինք մեր սեփական ուժին ու միասնականութեան, մեր հաւատքին ու վճռակամութեան: Յ. Շիրազի բառերով՝ «Բա՛ւ է հայեր ցրուած մնաք մատներիս պէս. բռունցքուելն է՝ յաւերժութիւնը Հայաստանի»: Այս է դարերէն եկող ու դարերուն գացող պատգամը հայոց պատմութեան:

 Ghadir Meat & Restaurant T. 416-750-7404 T. 416-750-7400 1848 Lawrence Avenue E. Scarborough, ON M1R 2Y4 E-mail: info@ghadirmeatmarket.com	 Noor Fine Food Gourmet Mediterranean Cuisine 1 High Meadow Place, Unit 9 Toronto, Ontario M9L 2Z5 Tel 416 745 3111 Fax 416 745 9337
 ANI Restaurant 905.761.6484 1450 Clark Ave. West, Thornhill ON L4J 7R5	 Sutton Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0 Annie Varbedian Sales Representative Direct: (416) 918-3615 Office: (416) 739-7200 Fax: (416) 739-9367 annievarbed@hotmial.com www.suttongroupadmiral.com
 Crown Pastries Fine Middle Eastern Pastries 2086 Lawrence Ave East (Lawrence & Warden) Toronto ON. M1R 2Z5 Tel 647.351.2015 www.crownpastriesbaklava.com	 I.D.A. Part of the <i>Apothecary</i> family of pharmacies. Pharmacists Sarkis Balian Vartan Balian Maral Abdalian Balian Cassandra Pharmacy Inc. 2040 Victoria Park Ave. Toronto, Ontario M1R 1V2 Tel. : 416.449.2040 Fax : 416.449.2048

Հայաստան-Սփիուք 6-րդ Համաժողովի Պաշտօնական Բացում

«Կարէն Դեմիրճեան»-ի անուան մարզահամերգային համալիրին մէջ երէկ՝ 18 սեպտեմբերին պաշտօնական բացումը կատարուեցաւ Հայաստան-Սփիւռք 6-րդ համաժողովին, որուն բացման խօսքը արտասանեց Հայաստանի սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեան, խօսք առին Հայաստանի եւ Արցախի նախագահներ Սերժ Սարգսեանն ու Բակօ Սահակեանը, ինչպէս նաեւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսն ու Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը: Ժողովին կը մասնակցին Հայաստանի իշխանութեան ներկայացուցիչներ, հոգեւորականներ եւ աւելի քան 1500 մասնակիցներ՝ 70 երկիրներէ:

Նախարար Յակոբեան՝ ողջունելով մասնակիցները, տեղեկացուց. «Մեծ պատուիրակութիւններ եկած են Միացեալ Նահանգներէն, Արժանթինէն, Ֆրանսայէն, Իրանէն, Ռուսիայէն, Վրաստանէն, Թուրքիայէն եւ Արցախէն:

Այնուհետեւ իր օրհնութեան խօսքը ուղղեց Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը՝ հաստատելով, որ, զգալի է սփիւռքահայութեան դերակատարութիւնն ու ներդրումը Արցախի եւ Հայաստանի կեանքին մէջ՝ աւելցնելով սակայն, որ տակաւին հայութիւնը կը գտնուի տարբեր մարտահրաւէրներու դէմ յանդիման: «Հակառակ բազում դժուարութիւններուն, Հայաստանի պետութիւնը համայն հայութեան պատուարն է եւ հայ ժողովուրդի գոյատեւման երաշխաւորը: Այսօր ժամանակն է, որ դառն փորձութիւններու ծանրութիւնը կրած մեր երկիրն ու ժողովուրդը կարենան հաստատ քայլերով ընթանալ վերելքի ուղիով, որ կը պահանջէ ուժերու ու կարողութիւններու ամբողջական

կեդրոնացում ու համախմբում», ըսաւ Գարեգին Բ. կաթողիկոսը:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան առջարկեց այս համաժողովը օգտագործել իբրեւ Հայաստան-սփիւռք ռազմավարական երկխօսութեան հարթակ, ուր միասնականութեան եւ բազմակարծութեան ոգիով տեղի ունեցող քննարկումներուն միջոցով ծնունդ պիտի առնեն ապագայի նոր գործողութիւններու ծրագիրներ՝ Հայաստանի, Արցախի եւ սփիւռքի գաղութներու զարգացման ու հզօրացման համար:

Ըստ անոր, այսօր Հայաստան աւելի ուժեղ է սփիւռքի աւանդական կառույցներու՝ միջազգային մակարդակի վրայ տարած աշխատանքներով:

Ս. Սարգսեան դիտել տուաւ, որ սփիւռքի բոլոր չերտերուն հետ փոխադարձ ներգրաւումներն ըրաւելելը, սփիւռքի մէջ հայապահպանութեան աջակցիլը, արտակարգ իրավիճակներու մէջ եղող հայրենակիցներուն կարելի եղածին չափ օգնութիւն տրամադրելը եղած են պետութեան քաղաքականութեան առանցքը: Նախագահը նաեւ հաստատեց, որ անկախութեան 26 տարիներուն սփիւռքի գործարարները բազում նուիրատուութիւններով եւ բարեսիրական նախաձեռնութիւններով նեցուկ կանգնած են Հայաստանին եւ Արցախին:

Ան անդրադարձաւ Հայաստանի ժողովրդագրական ներկայ պատկերին եւ արտագաղթի մտահոգիչ երեւոյթին, որոնք հետեւանք են քառորդ դարու առարկայական եւ ենթակայական բազմաթիւ գործօններու: «Յառաջիկայ բոլոր տարիներուն մեր քայլերը պիտի ուղղուին Հայաստանի մէջ բնակչութեան բնական աճը աւելցնելու: Մենք

կը յայտարարենք, որ մեր նպատակն է, որ Հայաստանը 2040 թուականին ունենայ առնուազն 4 միլիոն բնակիչ: Ակնյայտ է, որ մենք դժուար թէ այդ նպատակին կարենանք հասնիլ միայն ծնելիութեան մակարդակը աւելցնելով, մարդոց կեանքը երկարելու պայմաններ ստեղծելով եւ ժողովրդագրական պատկերը բարելաւող միւս քայլերով՝ թէեւ այդ ուղղութիւններով հաստատակամօրէն պիտի քայլենք: Ուստի, մեր նպատակադրումը կ'ենթադրէ գալիք 25 տարիներուն ընթացքին դէպի Հայաստան ներգաղթի լուրջ ցուցանիշներու ձեռքբերում»:

Հայաստանի նախագահը իր խօսքին մէջ լուսարձակի տակ առաւ նաեւ արցախեան քառօրեայ պատերազմին հայութեան միասնականութիւնը, Թուրքիոյ ուրացումի քաղաքականութիւնը՝ նշելով, որ հայութեան դատերու լուծման համար պէտք է լարել ուժերը եւ սերտել օրուան կարելիութիւնները:

Արցախի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեան իր ողջոյնի խօսքին մէջ կարեւոր ու պահանջուած նկատեց բարձր մակարդակով կազմակերպուած այս համաժողովը եւ մայր Հայաստանի, եւ սփիւռքի, եւ Արցախի համար: «Կարեւոր է նաեւ, որ համաժողովի աշխատանքներուն կը մասնակցին յայտնի պետական, քաղաքական ու հասարակական գործիչներ, գիտնականներ, վերլուծաբաններ, բարերարներ, տարբեր ոլորտներու ներկայացուցիչներ՝ աշխարհի բազմաթիւ երկիրներէ: Նման ներկայացուցչական բազմաաթիւ կազմը նաեւ կը հանդիսանայ տարբեր ժողովուրդներու եւ պետութիւններու հետ երկխօսութեան հաստատման ու ամրապնդման, բարեկա-

մական կապերու զարգացման յարմար հարթակ», նշեց նախագահ Սահակեան:

Արամ Ա. կաթողիկոս իր ողջոյնի խօսքին մէջ յոյս յայտնեց, որ ներկայ համաժողովը դառնայ Հայաստան-սփիւռք իրապաշտ երկխօսութեան եւ համահայկական խնդիրներու ու մարտահրաւէրներու լուրջ քննարկման եզակի առիթ: «Աւելի քան 25 տարիներու մեր փորձառութեան լոյսին տակ, փոխադարձ վստահութիւնն ու պատասխանատուութիւնը, աւելի ճիշդ է ըսել հաւաքակա՛ն պատասխանատուութիւնը, դեղեցիկ լողունգէ անդին՝ կեանքի պէտք է վերածուի՝ Հայաստանի, Արցախի եւ սփիւռքի միջեւ դերերու յստակեցումով, առաջնահերթութիւններու ճշդումով ու գործակցութեան նոր որակ տալով: Այս է մեր ազգը իր հայրենիքով ու սփիւռքով դէպի պայծառ ապագայ առաջնորդող միակ ապահով ճամբան: Այս գիտակցութեամբ հարկ է համազգային մտածողութեան մշակոյթ ստեղծել, հաւաքաբար ծրագրել ու գործել: Այս տեսլականով հարկ է բացուիլ նոր հորիզոններու ու քաջօրէն դիմագրաւել մեզ չըջապատող մարտահրաւէրներն ու տագնապները»:

Համաժողովի ծիրին մէջ տեղի ունեցաւ նաեւ Համահայկական խորհուրդի ստեղծման եւ Հայաստան-սփիւռք գործակցութեան հետագայ զարգացման հարցերով աշխատանքային խումբի խորհրդակցութիւն, որուն իրենց մասնակցութիւնը բերին երկու նախագահներն ու կաթողիկոսները: Այնուհետեւ ծաւալեցաւ քննարկում, որուն մասնակիցները կարեւոր նկատեցին կազմութիւնը յանձնախումբի մը, որ կը քննարկէ եւ կը յստակացնէ հետագային ստեղծուելիք կառույցի նախագիծը:

Linda Kharaboyan Notaire Notary Ձեր նոտարական և իրաւաբանական հարցերն ու ծրագիրները վստահեցե՛ք մեզի Vos affaires. À cœur. Therrien Couture 3111, boul. Saint-Martin O., #500 Laval (Québec) H7T 0K2 t. 450 682.5514 - 855 633.6326 linda.kharaboyan@therriencouture.com therriencouture.com	VIZUALIS optométriste DR SHANT DONABEDIAN Centre d'Achat Fairview - Fairview Mall Pointe Claire 514 695 2555 - VIZUALIS.CA	PHOTO Cristal (514) 744 4313 Mariage - Portrait - Graduation Restauration - Commercial - Passeport Publicité - Lamination - Encadrement Video - Reproduction 647 Boul. Decarie VSL-Montreal QC H4L 3L3 photocrystal@hotmail.com www.photocrystal.com
Assura Bien inc. Cabinet en assurance de dommages et de services financiers Ապահովագրական գրասենեակ KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN 970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc., H4T 1W7 T: 514.903.3999	RITA BAGHDASSARIAN Conseillère en Sécurité Financière Revenu Garantie Viager COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT 3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8 Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262 ritabagh@yahoo.com	TAXI MIRABEL 450-430-2650 Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիքը ունի 20 հայ թաքսի վարորդի Միրապէլ շրջանին մէջ: Հաճեցե՛ք հեռաձայնել Արայիին (514) 979-1317 թիւին: Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number, besoin de chauffeur de taxi. Call/Appelez: (514) 979 1317
RE/MAX RE/MAX 3000 inc. Agence immobilière Elie Berberian Courtier immobilier / Real Estate Broker C 514.519.3543 B 514.333.3000	ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN POSE D'ONGLES RÉSINE ET POWDRE MANICURE & PÉDICURE AVEC GEL RECouvreMENT SUR ONGLES NATURELS Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝ 514 941-0014 LAVAL	KRIKOR MAROUNIAN RLU Independent Financial Security Broker Life Insurance • Disability & Critical Illness Insurance Group Insurance • Pension Plans Travel/Visitor Medical Insurance 11820 General Giraud Montreal, QC H4J 2H6 Res: (514) 332-7021 Fax: (514) 332-7376 Cell: (514) 927-2666 krikormar@gmail.com
FIVE STAR ELECTRIQUE CINQ ÉTOILES SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING RESIDENTIAL-COMMERCIAL BEDROS NALPATIAN 442, LA RIVIÈRE, LAVAL, QC. TEL: 514-497-5155 FAX: 450-689-3997 E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM	CENTUM™ Metrocapp Wealth Solutions Inc. License # 12147 Mortgage programs for new comers to Canada New purchases Refinancing Second mortgages Self employed Low credit score Access to top lenders including private lenders 416.662.6650 cell centum.ca/sosie_demersesian	ALINE BEKEREJIAN NOTAIRE - NOTARY 180, rue Fleury ouest Montréal, Qc, H3L1T5 T 514.382.7222 F 514.381.1818 aline.b@notarius.net www.abnotaires.com Նոտար եւ իրաւաբանական խորհրդատու՝ Ալին Բեքերճեան

ՀՅԴ ԳԵՄ-ի Վանգուվերի «Արշալիր Շիրակեան» մասնաճիւղի տարեկան բանակում



ԳԵՄ-ի Վանգուվերի «Արշալիր Շիրակեան» մասնաճիւղի տարեկան բանակումը տեղի ունեցաւ 1-4 Սեպտեմբեր 2017-ին, Պրիթիշ Գոլոմպոյ Մեյթլ քաղաքի Whonnock բանակավայրէն ներս: Բանակումին մասնակցեցան 30 երիտասարդ-երիտասարդուհիներ: Իրենց ներկայութիւնը բերին նաեւ Գանատայի Երիտասարդական Միութեան Կեդրոնական վարչութեան անդամներ՝ ընկ. Նժդէհ Գալուստեան եւ ընհհ. Միրնա Ֆուտուլեան: Բանակողները բաժնուած էին 4 խմբակներու. Մարտակերտ, Շուշի, Գետաշէն եւ Ստեփանակերտ:

Բանակումին ընթացքին տեղի ունեցան դաստիարակչական դասախօսութիւններ: ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի անդամ ընկեր Վահէ Անտոնեան այցելեց բանակավայր եւ դասախօսութիւն մը տուաւ, նրա լեզուն արդէ «ՀՅԴ-ն ու ներկայ Երիտասարդութիւնը»: Հայր Հրանդ Վարդապետ Թահանեանն ու Հայր Գարեգին Վարդապետ Շիրտմեանը ներկայացուցին «Վարդանանց պատերազմը», իսկ ԳԵՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամները ներկայացուցին «ԻՒ ոլորտը Հայաստանէն ներս» նաեւ ընդհանուր զեկուցում տուին Զաւարիքի մասին:

Բանակումին առկայ էին հերթապահի եւ գիշերապահի դրութիւնները, յարձակում, դաստիարակչական խաղեր, հարցազրոյցներ, ոտնագնդակի մրցաշարք եւ խրախճանք: Կիրակի, 3 Սեպտեմբեր 2017-ին տեղի ունեցաւ ընդհանուր ժողով, եւ ընտրուեցաւ 2017-2018 տարեշրջանի վարչական կազմը:

Բանակումի աւարտին երիտասարդները նորոգելով իրենց ուխտը եւ խոստանալով ծառայել հայրենիքին ու գաղութին՝ վերադարձան իրենց տունները:

Մեդրիկ Սիւլանեան Զաւարիքեան

ՀՄԸՄ Թորոնթոյի շեփորախումբը՝ Մարքամի մէջ



Գանատայի համադաշնութեան 150-ամեակին առիթով, Մարքամի քաղաքապետութիւնը ձեռնարկած էր ամիսներու վրայ երկարող բազմաթիւ նախաձեռնութիւններու, որոնց շարքին էր տողանցք մը՝ մասնակցութեամբ տարբեր գաղութներու կազմակերպութիւններու, տեղացի մարզիկներու եւ Մարքամի ականաւոր ղէմքերու:

Տողանցքը տեղի ունեցաւ 10 Սեպտեմբերին, որուն իր հանդիսաւոր մասնակցութիւնը բերաւ ՀՄԸՄ Թորոնթոյի շեփորախումբը:

Շեփորախումբը արժանացաւ բոլոր ներկաներուն եւ կազմակերպութիւններուն ներկայացուցչներուն բարձր գնահատանքին: Մարքամի քաղաքապետ Ֆրանք Աքարիթիթի անձամբ տեսակցեցաւ շեփորախումբի անդամներուն հետ: Ան դրուատիքով եւ երախտագիտական զգացումներով անդրադարձաւ թորոնթոյ գաղութի աշխատանքներուն, ինչպէս նաեւ Մարքամի տարբեր ձեռնարկներուն շարունակական մասնակցութեան համար: Աքարիթիթի յայտնեց իր հպարտութիւնը եւ ուրախութիւնը ի տես պատանեկան շեփորախումբի գերազանց կատարումին եւ կարգապահութեան:

Խաժակ

ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան անդամները մաքրեցին «Յիշատակի Պուրակ»ը

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Օնաթրիոյի մարմինի կազմակերպած աշխատանքներուն կարեւորագոյններէն մէկն էր Օնաթրիոյի Մարքամ քաղաքի մէկ հեկտար հողամասի վրայ 100 ծառերով տնկուած «Յիշատակի Պուրակ»ի իրադրութեամբ, որուն բացումը կատարուած էր Հայաստանի Վերանկախացման 24-ամեակին առիթով: Այդ օր, Թորոնթոյի շեփորախումբը ուխտած էր բարոյապէս եւ նրախաղէս զօրավիճակէն ալ շեփորախումբի:

Եւ այսպէս, այդ թուականէն երկու տարի ետք, ՀՅԴ ԳԵՄ-ի «Սիմոն Զաւարեան» Մասնաճիւղի անդամները 16 սեպտեմբեր 2017ին ուղղուեցան «Յիշատակի Պուրակ» մաքրելու եւ յարգարելու համար զայն, առ ի պատրաստութիւն Հայաստանի Վերանկախացման 26-ամեակին:

Գնահատելի է այս տղոց յանձնառութիւնը՝ զօրավիճակէն ալ շեփորախումբի եւ հաստատելու թէ երիտասարդներն են արթուն պահակները մեր պատմութեան ու ժառանգութեան:



Այցելեցէք Հայաստանի
Հանրապետութեան
դեսպանատան կայքէջը՝
www.canada.mfa.am

 HAIG AFARIAN Cell : 514.862-6779 Bur : 514.360.3000 ext 1234 haig.afarian@gmail.com effectuée par MALES ARCHITECTES-HYPOTHECAIRES Charisma FINANCE 3310 100e Avenue, bureau 350, Laval Québec H7T 0J7 • FAX: 514.313.5718	Groupe Sutton - Performer Inc. 123 Place Frontenac Pointe-Claire, QC H9R 4Z7  ALBERT ARKILANIAN Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker aarkilianian@sutton.com Cell: 514.962.8822 Bur: 514.426.9595 Fax: 514.426.9596 *certaines conditions s'appliquent	NISSAN VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS HONDA GABRIEL GABRIEL Kevork Asadourian Directeur des ventes - usagé Sales Manager - Pre-Owned kasadourian@gabriel.ca 7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4 Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967 www.nissangabriel.com • www.hondagabriel.com
École De Conduite AZIG Driving School Tel: 514-336-1110 Moniteur-Instructeur AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II	Personal & Corporate Tax Returns Financial Statements Bookkeeping Business Plan  NATALIE SKAFF, CPA, CGA Comptable Professionnelle Agréée Chartered Professional Accountant nat.skaff@gmail.com Tel: (514) 963 3363 2866 Rue De Chamonix Saint-Laurent, Québec H4R 3B7 Services available in Armenian, Arabic, English and French	BRING YOUR OWN WINE NAZARETH CLASSIC GRILL 550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com
SAMUEL TOPALIAN 450 682-1644 AUTO SAMSON  MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE SERVICE DE PNEUS MISE AU POINT 4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.	 ՀԱՅԿ ԽԱՐՏՈՒՆԻԱՆ Hayk Hartounian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker C 514.574.6162 B 514.333.3000	NETTOYEUR MARIE-CLAIRE CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTREAL ET LAVAL) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

«Միջին Արեւելքի Յանձնախումբերը Մեզի Բարեկամ Արաբ Ժողովուրդին Կը Բացատրեն, Թէ Մեր Դատը, Պաշարը, Պահանջները Ի՛նչ Են»

Հարցացրոց ՀՅԴ Բիւրոյի անդամ եւ Հայ դատի Կեդրոնական խորհուրդի նախագահ Յակոբ Տէր Խաչատուրեանի հետ (Բ. մաս)

Հ.– Ինչպէ՞ս կը կատարէ՛ք Հայ դատ հասկացո–ղութեան տարագումը այսօր։

Յ. Տ. Խ.– Հետաքրքրական հարցում է, որովհետեւ տեղ–տեղ մեր ժողովուրդի մտքին մէջ տակաւին չփոթ կայ, թէ արդեօք Հայ դատ եւ Յեղասպանութեան ճա–նաչում նոյն բառամթե՞րքն են, նոյն հասկացողու–թի՞ւնն են։ Բնականաբար անցեալին, առհասարակ, մեր աշխատանքները կեդրոնացած էին այդ նիւթին վրայ, այսինքն՝ Յեղասպանութեան ճանաչման եւ երբեմն ալ Հայաստանի անկախութեան հարցին վրայ։ Կասկած չկայ, որ վերջին 30–35 տարիներուն մեր ժողովուրդի եւ երիտասարդութեան քաղաքականացման նիւթն ալ նկատի առնուեցաւ։ Խորքին մէջ երկու հիմնական ոլորտներ կը հանդիսանային մեր կիզակէտը. մէկը Յե–ղասպանութեան հարցն էր, միւսը՝ քաղաքականացման օրակարգը, երիտասարդութիւնը քաղաքական կեանքի մղելը. բայց բնականաբար 26 տարի առաջ մենք ունե–ցանք մեր անկախութիւնը, Արցախի գոյամարտը, ուս–տի Հայ դատի օրակարգը ճոխացաւ։ Նկատի ունենալով 20–րդ դարու երկրորդ կիսուն եւ 21–րդ դարու սկզբնաւորութեան տրուած կարելիութիւնները՝ հասնե–լու նաեւ այն հայերուն, որոնք տակաւին կը բնակին մեր հողերուն վրայ, ըլլայ ջաւախհայութիւն, ըլլան Արեւմտեան Հայաստանի թաքուն հայերը կամ այլ տարազաւորումով ներկայացուած շերտերը, այդ ալ դարձաւ մեր կիզակէտը։ Ուրեմն, ինչպէս ըսի մեր խօս–քի սկզբնաւորութեան, այլեւս ճիշդ չէ հաւասարեցնել Հայ դատի հասկացութիւնը կամ սահմանումը միայն Յեղասպանութեան ճանաչման եւ պահանջատիրու–թեան, այլ միւս երեք օրակարգերը եւս իրենց կարեւոր բաժինը ունին, երբեմն նոյնխօկ աւելի գերակշիռ կ’ըլ–լան։ Այսօր ունինք Հայաստան եւ Արցախ, ուր կան առաջնահերթութիւններ, օրէ օր ի յայտ եկող զարգա–ցումներ, որոնք բնականաբար պիտի նկատուին առաջ–նահերթութիւն, եւ հոն պիտի կեդրոնանանք. ուրեմն կրկնելու գնով ըսեմ, որ այդ օրակարգի հարստացումէն ետք, վերջին 26 տարիներու ընթացքին բնականաբար սահմանումը կեդրոնացած է այդ չորս կէտերուն վրայ. առաջինը հայրենի պետականութեան հարցն է, Արցա–խի գոյամարտը, Արցախի բանակցային գործընթացի եւ հայկական կողմի առաւելութիւններ տալու հարցը, երկ–րորդ՝ Յեղասպանութիւնն է, ո՛չ միայն ճանաչման–պահանջատիրական, որուն վրայ եկած է աւելնալու օրինական երեսը, երրորդ՝ ջաւախհայութեան եւ Արեւմտեան Հայաստանի հայութեան հայապատկան հողերու վրայ բնակող հայութեան հարցն է, չորրորդը ընդհանրապէս ժողովուրդի եւ մանաւանդ երիտասար–դութեան քաղաքականացման եւ մեր ապրած տարբեր երկիրներու մէջ քաղաքական կեանքին մասնակցու–թեան խնդիրն է. եւ այդ իմաստով կշիռը, տոկոսը այս հարցերու՝ շարունակաբար յարափոփոխ վիճակի մէջ է, որովհետեւ տարիէ տարի կը ճշգուիին առաջնահերթութեւնները։ Բնական է՝ եթէ կայ տագնապ, ինչպէս էր 2016 ապրիլին, երբ արձանագրուեցաւ յարձակողական քաղաքականութեան ամէնէն տխուր էջը Ագրպէյճանի կազմակերպած գրոհին, բոլոր յանձնախումբերուն ու–շադրութիւնը կեդրոնացաւ քարոզչական մարզին վրայ, քաղաքական բուռն աշխատանք տարուեցաւ, որպէսզի Ագրպէյճանի իսկական դէմքը ներկայացուի, քանի որ միջազգային չփոթ կար՝ ո՞վ սկսած է այդ պա–տերազմը, ի՞նչ նպատակով է եւ այլն։ Միջազգային ուժերը, ինչպէս գիտէք, միշտ ալ կը փորձեն սխալ հա–ւասարակշռութեան սկզբունքով երկու կողմերն ալ այ–պանել, եւ մենք փորձեցինք բացայայտել, որ այդպէս չէ. եղածը միակողմանի կերպով նախաձեռնուած պա–տերազմական քայլ էր, որ կը միտէր Ագրպէյճանի կող–մէ հարցը պատերազմի ճամբով լուծել, եւ այդ լուծման միջոցը բնականաբար մենք կ’ուզենք բացառել։

Հ.– Արցախ նախորդ շաբաթ նշեց իր անկախու–թեան 26–ամեակը. նախ անդրադառնամք այս հիմ–նախնդիրի ծալֆերուն՝ համառօտ կերպով եւ բանակ–ցային հոլովոյթի ներկայ հանգրուանին։

Յ. Տ. Խ.– Նախ ըսեմ, որ բանակցութիւնները շատ արդիւնաւէտ չեն եղած վերջին չրջանին, եւ հայկական կողմը արդարացիօրէն շեշտած է, մանաւանդ՝ 2016–ի պատերազմական գրոհէն ետք, որ հիմնական խնդիրը փոխադարձ վստահութեան վերացած խնդիրն է, զինա–դադարի 1994–1995–ի վերահաստատումն է եւ փոխա–դարձ մեքանիզմներու տեղադրումը, որպէսզի կարելի ըլլայ իսկապէս գիտնալ, թէ ո՞վ է նախայարձակ կողմը, ո՞ւր է պատասխանատուութիւնը, եւ վերադառնանք քիչ մը բնականոն կեանքի։ Ասիկա պատեհ առիթ է

շեշտաւորելու, որ հարցի բուն էութեան քննարկումի խնդիրին հասնելէն առաջ պէտք է այդ վստահութիւնը վերականգնի, զինուորական հաւասարակշռութիւնը վերահաստատուի, եւ Ագրպէյճան միանգամընդմիշտ եւ վերջին անգամն ըլլալով համոզուի, որ բանակցային ընթացքով է, դիւանագիտական սեղաններու շուրջ նստելով է, որ այս հարցը լուծում պէտք է գտնէ եւ ոչ թէ՛ պարտադիր պատերազմով։ Ագրպէյճան իր ունեցած հարստութեան ընծայած կարելիութիւններէն մեկնելով՝ կ’ուզէ աւելի օգտուիլ եւ իր ռազմաշուռնչ յայտարա–րութիւններով ժողովուրդն անգամ միշտ կը պատրաս–տէ պատերազմի, որ բացառէ խաղաղ բանակցութիւն–ներու հնարաւորութիւնները. սա անընդունելի երեւոյթ է, որովհետեւ ամբողջ աշխարհը կը դատապարտէ մօ–տեցումը, եւ կրնամ վստահեցնել, որ հայկական կողմն ալ յանպատրաստից կերպով չի դիմակայեր այս հարցը, որովհետեւ համոզուած է, որ իր թշնամիին այս ռազմա–շուռնչ յայտարարութիւններուն մէկ մասը շատ լուրջ է եւ, տակաւին, նախագահին եւ ամբողջ վարչակարգին մօտ կայ այն համոզումը, որ իրենք կրնան որեւէ ժա–մանակ պաղ պատերազմը, զինադադարեան մթնոլորտը բռնկեցնել, վերածել տաք պատերազմի եւ կրնան ըլլալ յաղթական կողմ։ Այս ցնորքին, որ ցնորք է մեզի հա–մար, սխալ ըլլալը փաստելու համար պէտք է ըլլանք պատրաստ եւ՝ ամբողջովին համոզուած. բարեբախտա–բար ունինք այն բարոյական առաւելութիւնը, որ մեր այդ հոյակապ տղաքն ու աղջիկներն են, որոնք կը կուռին սահմանին վրայ, իրենց հողն է, որ կը պաշտպա–նեն, մինչդեռ դիմացի կողմիները՝ կուրցած Ագրպէյ–ճանի տրած քարոզչութիւնէն, կը հաւատան, որ իրենք ալ եկած են հող ազատագրելու. այդ անընդունելի պատճառով կրնայ որեւէ ժամանակ բռնկիլ պատերազ–մը. հոն կայ ռազմական բաժինը, որ միշտ պատրաստ ըլլալու հանգամանքին մէջ կը կայանայ, եւ կայ երկ–րորդը, որ քաղաքական մեր աշխատանքն է, որուն վրայ կը կեդրոնանայ Հայ դատի գործունէութիւնը՝ երեք ուղղութիւններով. առաջինը ինքնորոշման իրա–ւունքի եւ Արցախի անկախութեան ճանաչման քաղա–քականութեան գործընթացն է, որ կարելի եղածին չափ առաւելագոյն կէտի կը փորձենք հասցնել, կարելի եղա–ծին չափ կ’ըսեմ, որովհետեւ կարգ մը երկիրներ իրենք ալ ունին ներքին տագնապներ, ուր փոքրամասնու–թիւններ կամ ազգային խմբաւորումներ կը փորձեն շեշտել ինքնորոշման իրաւունքը, եւ այդ երկիրները շատ զգայուն են, նոյնիսկ՝ Քանադան, Սլաւիան, որոնք կը փորձեն կարելի եղածին չափ հեռու մնալ այս հարցէն, չարտայայտուիլ, որովհետեւ կը վախնան, որ որեւէ մէկ յստակ դիրքորոշում՝ իրենց համար կրնայ նախընթաց ըլլալ եւ ներքին խռովութիւն պատճառել։ Կը փորձենք արգելքը չըջանցել եւ երեմն ուղղակի աշխարհային մակարդակներու հետ կապ պահել, բայց կարելի չէ չըջանցել այն իրողութիւնը, որ աշխարհի մէջ պէտք է ամէն գնով աշխատանք տանիլ՝ քաղաքապե–տական, նահանգային, թէ դաշնակցային մակարդակով, եւ այդ ճանաչման հարցը փորձենք յաջողցնել։ Ասիկա առաջին հսկայական գործն է, որ կը կատարուի Արցա–խի համար։ Երկրորդ՝ բնականաբար ուղղակի Արցախի ժողովուրդին օժանդակութեան, անոր բարոյահոգեբա–նական վիճակի բարձր պահելուն եւ ամէն ձեւով անոր օժանդակելու խնդիրն է, եւ ատիկա տարբեր ձեւերով տեղի կ’ունենայ։ Միայն Հայ դատի յանձնախումբը չէ, որ կ’ընէ ատիկա, ՀՕՄ–ը իր մանկապարտէզներու ցան–ցով կը կատարէ, Մոսկուայի մէջ նախկին արցախցիներ կամ հայկականութեամբ տողորուած մեծահարուստներ իրենց ներգրումներով կ’ընեն, Դաշնակցութիւնը Փոնտ կը հաստատէ. այս բոլոր աշխատանքները երկրորդ երեսն են Արցախի օժանդակութեան։ Երրորդը, որ բնա–կանաբար նաեւ մեր հիմնական առաջադրանքն է, Ար–ցախի հարցի համաշխարհային ճանաչման մէջ Արցախի պետական պատասխանատուներու ուղղակի մասնակ–ցութիւնն է, որպէսզի կարողանան տարածել, իրենց ար–ժեւորումը բացատրել եւ ներկայացնել խնդիրը։

Բանակցային գործընթացին համար մենք ան–շուշտ խանդավառ չենք Մատրիտեան սկզբունքներով, որ հիմքը կը կազմէ այդ բանակցութիւններուն. այն–տեղ կայ փոխդիջման հասկացողութիւն, սակայն հայ–կական կողմը, որ սկզբնական իր համաձայնութիւնը տուած է, նկատած է, որ որեւէ նախաձեռնութիւն, որ–քան ալ զիջողական ըլլայ, ինքնաբերաբար միշտ մերժ–ուած է Ագրպէյճանի կողմէ, որ այս առումով կը մե–ղադրէ միջազգային հասարակութիւնը, որ կառուցողա–կան ոչ մէկ կեցուածք ունի։ Ագրպէյճանի ամէն ինչին

ոչ ըսելը ամէնէն դիւրին բանն է, բայց նաեւ, բնակա–նաբար, աշխարհի ուժերը՝ ԵԱՀԿ–ի Մինսքի խմբակի նախագահները, լուծման փնտտուքի մէջ են եւ, իրենց համաձայն, այդ լուծումը կ’անցնի փոխզիջման տար–բերակով, եւ իրենք կ’ուզեն, որ երկու կողմերը իսկական խօսակցութիւն ունենան եւ ոչ թէ՛ պարզապէս գան՝ ամէն մէկը իր դիրքը շեշտէ եւ մեկնին։ Այդ ուղղու–թեամբ մեր վրայ ալ ճնշում կը բանեցնեն, սփիւռքի վրայ, Դաշնակցութեան վրայ առհասարակ, որպէսզի մենք ալ օգնենք գործընթացին, սակայն Դաշնակցու–թիւնը յստակօրէն նշած է, որ իրեն համար կան կարմիր գիծեր, զորս պէտք չէ չըջանցել եւ մեր աշխատանքը, Հայ դատի արտաքին մակարդակի աշխատանքը կը կեդրոնանայ հայկական կողմի դիրքորոշումը գօրացնե–լու մէջ՝ շարունակաբար բացայայտելով Ագրպէյճանի ժխտական քաղաքականութիւնը եւ երբեմն՝ ցեղապաշ–տական հայատեաց ատելութիւն տարածող այդ մթնո–լորտի ստեղծման քաղաքականութիւնը, որ դատապար–տելի է աշխարհին կողմէ։

Հ.– Արցախի կապուած մէկ հարց եւս՝ արցախ–եան կողմի բանակցային հոլովոյթի մասնակցու–թեան հարցը, եւ որմէ ետք կ’ուզեմք անցնիլ ջաւա–խահայութեան թղթածրարին։

Յ. Տ. Խ.– Արցախի բանակցութիւններէն Լեռնա–յին Ղարաբաղի Հանրապետութեան բացակայութիւնը շատ մեծ սխալ էր, որ պէտք էէր իսկ տեղի ունենար, բայց իրողութիւնն այն է, որ այսօր այդ է կացութիւնը, մենք՝ իբրեւ Հայ յեղափոխական դաշնակցութիւն, միշտ ջատագովը եղած ենք, որ Արցախը վերադառնայ բա–նակցային սեղան, որովհետեւ վերջ ի վերջոյ իր ճակա–տագրի ճշդման մէջ նոյնիսկ նախնական համաձայնու–թիւններուն մէջ ինքն ալ պէտք է ըսէ իր հանդիստ «այո»–ն, եւ «այո» ըսելու համար բաւական ճամբայ կայ կտրելիք՝ տեսնելու համար, թէ ի՛նչ ձեւի, ի՛նչ պատկեր կ’ունենայ այդ ապագայ համաձայնութիւնը։ Այդ ուղղութեամբ էական է, եւ ուրախ եմ ըսելու, որ վերջին տարիներուն Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչները այդ հարցը կը դնեն սեղանին վրայ, բնականաբար Ագրպէյճանը մերժողական կեց–ուածք ունի, շատ խանդավառ չէ, որովհետեւ կ’ուզէ ասիկա ներկայացնել իբրեւ Հայաստանի հետ հակա–մարտութիւն, մինչդեռ ըսուածը այն է, որ պարզապէս ժողովուրդի ինքնորոշման հարցին վրայ է հիմնուած ամբողջ Արցախի գոյամարտը։ Ուրեմն այդ ուղղու–թեամբ ամէն ձեւ եւ ամէն կերպ պէտք է որոնենք՝ հա–մոզելու միջազգային հասարակութիւնը, որ Ղարաբաղի բացակայութիւնը սեղանէն՝ չ’օգներ լուծումի հասնե–լու. ճիշդ է, որ կրնայ Ագրպէյճանը միշտ վեթօ դնել՝ իբրեւ բանակցող կողմ, բաւական ըսելիք ունի ան, բայց նաեւ կը հաւատանք, որ ան օր մը պիտի համոզ–ուի, որ եթէ իսկական եւ տեւական խաղաղութիւն պիտի հաստատուի այնտեղ, պէտք է արցախցիները հանգիստ սրտով «այո» ըսեն առաջարկուած լուծումին։ Մենք մինչեւ վերջ պիտի հետապնդենք այս հարցը, որ Արցախ միանայ բանակցութեան սեղանին։

Հ.– Ջաւախքի թղթածրարին մէջ ինչպիսի՞ մար–տախաւէրներ կան։

Յ. Տ. Խ.– Տարիներու ընթացքին Վրաստանի իշ–խանութեան տարբեր ներկայացուցիչներու փորձած ենք բացատրել, որ հայութեան եւ Դաշնակցութեան հիմնա–կան առաջադրանքը այն է, որ մեր ժողովուրդը կարո–ղանայ խաղաղ ապրիլ այդ հողերուն վրայ՝ իբրեւ Վրաստանի քաղաքացի, բայց՝ երեք ձեռնածալ չմնա–լով, երեք չհրաժարելով իր մարդկային իրաւունքնե–րէն, իր ազգային փոքրամասնական միջազգայինօրէն ճանչցուած իրաւունքներէն, լեզուամշակութային ներ–քին ինքնավարութեան եւ այլ հարցերէն։ Դժբախտա–բար միշտ հասկացողութեամբ չեն մօտեցած Վրաստանի իշխանութիւնները այս խնդիրներուն եւ տարիներու ընթացքին նոյնիսկ երբեմն հալածանքի մթնոլորտ տի–րած է, ինչ որ ուղղակի թշնամանքի վերածուած է։ Ասի–կա լաւ երեւոյթ չէ, եւ մենք փորձած ենք միշտ մղել Հայաստանի պետութիւնը, որ այս հարցը բարձրացնէ, բնականաբար Հայաստանի պետական համակարգն ալ, նկատի ունենալով, որ կ’ուզէ պահել բարի դրացիական յարաբերութիւն Վրաստանի հետ, որովհետեւ Վրաստան իրեն ամէնէն կարեւոր ելքն է դէպի աշխարհ, նոյնիսկ՝ աւելի քան Իրանի փոքրիկ սահմանը, յատուկ զգայնու–թեամբ կը մօտենայ այս խնդիրին, չափազանց զգուշա–

● ● ● ➞



Noor Fine Food
Gourmet Mediterranean Cuisine

Ձեր ճաշատեսակներու՝ Հայկական եւ Միջին Արեւելեան պահանջներուն համար դիմեցէ՛ք «Նոր Ֆայն ֆուտ» հաստատութեան, որ միշտ պատրաստ է, ձեր սպասարանները (Քէյթերինկ) ճիշտ ժամանակին հասցնել ձեր հասցէներուն:

Թորոնթոյի հասցեն,-

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5

Tel 416 745 3111

Fax 416 745 9337

by Samadi Traqi Group

@ www.instagram.com/noorfinefood



«Նոր Ֆայն ֆուտ» հաստատութիւնը մասնագիտացած է նաեւ տեւականոր խորովածներու (քէպապ) պատրաստութեան միջեւ իսկ ընան գառնուկ եփուած եւ անոր յարակից ուտելիքներով: Զղիւնը որ գառնուկները ծնած եւ մեծցած են Օնթարիո մէջ:

Հաստատութիւնը պատրաստ է նաեւ մկրտութիւններու, նշանտոբներու, հարսնիքներու եւ այլ խրախճանքներու ու հաւաքոյթներու ձեր նախապիրած ուտելիքներ մատակարարելու:



«Նոր Ֆայն ֆուտ» հաստատութիւնը մօտ օրէն
«BABYLON» ճաշարանը պիտի բանայ Հայաստանի մէջ:





*Society for Orphaned Armenian Relief (SOAR)
Montreal Chapter*

Annual Fundraiser

October 21, 2017

*SOCIÉTÉ DES ARMÉNIENS D'ISTANBUL
at 2855 VICTOR DORÉ, MONTREAL, QC. CANADA H7M 1T1.*

Cocktails 5:30

Dinner 6:30


*Followed by a musical program and a concert
performance by children for children*

Cover Charge Per Invitee 500.00 CDN
(official tax receipt will be issued)

For tickets or additional information please contact

Dr. Sarkis Yeretsian 514-836-1562 or yeretsian@sympatico.ca

Mr. Souren Hadjian at 514-549-1415 or souren@videotron.ca



**Proceeds from the event will be used for the
renovation of the gymnasium at vardashen Orphanage**

visit <http://soar-us.org/distarm2017.html#gymnasium>



for more information



SOAR Montreal is an affiliate of the Society for Orphaned Armenian Relief, a nonprofit organization based in the US, dedicated to providing humanitarian relief to orphaned Armenian children. Working with a loyal donor base and a trusted network of partners, SOAR distributes clothing, educational supplies, medicine, and other essential resources to orphaned Armenian children throughout the world.

ANI

Ristorante

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

LOOKING FOR FULL TIME CHEF TO GRILL

Fine Dining
Catering
Party Room
FOR UP TO 15 PEOPLE

www.aniristorante.ca

VILLAGE GREC

Special of the day with coffee and dessert
Monday to Friday \$9.95 11am – 4pm
Saturday and Sunday \$10.95 11am - 4pm
4491, boul. Samson, Chomedey, Laval
Tel: 450 681-3333

Dim. à mer. : 11h à 11h Sun. - Wed. 11am - 11pm
Jeudi à sam. : 11h à minuit Thurs. - Sat. 11am - midnight

CONNU POUR LE MEILLEUR SOUVLAKI ET GYRO EN VILLE !
KNOWN FOR THE BEST SOUVLAKI & GYRO IN TOWN!

GLOBAL ONLINE AUCTION TO BENEFIT
ARMENIAN RELIEF SOCIETY INC.
 ENDOWMENT FUND
VISION 2020

NOVEMBER 1ST- 12TH 2017
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԱՆ ԴԱՐԱՆ

TO VIEW AND BID ON AUCTION ITEMS VISIT:
[HTTPS://BIDDINGFORGOOD.COM/ARSEASTUST](https://biddingforgood.com/arseatust)
 CONTACT THE ARS AUCTION COMMITTEE AT: ARSGLOBALAUCTION@GMAIL.COM



AUCTION ITEMS INCLUDE:

WEEK-END GETAWAYS | UNIQUE GIFTS | RESTAURANT GIFT CARDS | SPA AND SALON SERVICES
 | JEWELRY | ELECTRONICS | ARTWORK | SPORTS MEMORABILIA | SPORT EVENTS | MUCH MORE!



Հայաստանի Հայ Կրթական և Աշխարհագրիկ Միություն
 Hamazkayn de Montréal - Sarahin

A l'occasion du
375 ième anniversaire de la Ville de Montréal
 et du 50 ième anniversaire de l'Ensemble de Danse ANI

Sous la présidence de
M. et Mme Adom et Seta Malkhassian

L'Ensemble de Danse ANI
 présente
 La suite de danses
GAYANÉ
 de Aram Khachaturian

Directrice artistique et chorégraphe
Eva Airapetian

Samedi le 14 octobre 2017 à 20 h
Dimanche le 15 octobre à 19 h

Centre Pierre-Péladeau
Salle Pierre-Mercure
300 Boul. De Maisonneuve Est, Montréal

Admission générale: \$35, VIP: \$50 12 ans et moins: \$20
 Sylvie Merdjanian 514-773-9391
 Shoghig Kataroyan 514-833-1723

Manoir Gouin
 Résidence pour
 aînés autonomes
 et semi-autonomes

Résidence
 Certifiée

À partir de **995\$** (après taxes)
 Tous les repas, collations et supervision
 médicale inclus
1½ à 4½

**Gicleurs automatiques
 dans chaque appartement**

Մեկը հոս ուրախ եկը
 Դրև. Իրեկեան

**ՊԵՏԱՐԱԳ ՏԵՌԻ ԿՊՈՒԵՆԱԿ
 ՍԵՐ ՀԱՆԳԱՍՏԵԱՆ ՏՈՒՆԷՆ ԱԵՐԱ:**

Il n'y a pas d'âge pour être heureux!

12300 boul. Laurentien, Montréal H4K 2Z6
514.335.1881 • www.manoirgouin.com

les encadrements
olympic

SINCE 1988 OLYMPIC PICTURE FRAMES
 HAS MADE OR IMPORTED HUNDRED OF THOUSANDS
 OF FRAMES FOR PRINTINGS, WATERCOLORS,
 LITHOGRAPHS AND MIRRORS.

OUR CUSTOMERS INCLUDE FRAMING STORES,
 ART GALLERIES, MUSEUMS, ARTISTS
 AS WELL AS PRIVATE CLIENTS.

IN STORE WE HAVE MORE THAN 3000 SAMPLES,
 AS WELL AS 600 READY FRAMES FOR YOU TO CHOOSE.
 FROM BACKED BY OUR EXPERTISE AND SOLID
 EXPERIENCE WE WILL ADVISE YOU IN MAKING
 THE RIGHT CHOICE.

OUR WHOLESALE PRICES ARE MORE THAN
 COMPETITIVE. BEFORE BUYING COME AND SEE US,
 YOU WILL BE REALLY PLEASED.

Մեծաքանակ Շրջանակների Արտադրություն

6831, DE L'ÉPÉE,
 (ACCÈS PAR BEAUMONT)
 MONTRÉAL (QUÉ.) H3N 2C7
 TEL/FAX: (514) 495-1930
encadrementolympic.com

COUPON
 VALID UNTIL
DECEMBER 2017
 15% OFF

ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ ՄԷ՛կ փոփոխութիւն

Երբ փոփոխութիւններու մասին կը խօսուի, իրաւամբ հարց կը տրուի, թէ արդեօք այդ փոփոխութիւնները միշտ ցանկալի՞ են, թէ՞ ոչ. անոնք կը բարեւալե՞ն, թէ՞ կը վատթարացնեն մեր կեանքը, մեր անհատական կեանքը, բայց մանաւանդ մեր հաւաքական կեանքը։

Ի հարկէ ամեն փոփոխութիւն կարելի է երկու կողմէ դիտել ու տեսնել, կամ փորձել տեսնել, մէկ կողմէն՝ անոր առաւելութիւնները, միւս կողմէն՝ անպատեհուեթիւնները։ Չկա՞ն հաւաքականութիւններ, աշխարհի վրայ քիչ մը ամեն տեղ, նոյնիսկ Հիւսիսային Ամերիկայի տարածքին, որոնք, ինչ–ինչ սնահաւատութիւններէ մղուած, տակաւին կը մերժեն օգտուիլ վերջին 100–200 տարիներուն յառաջացած արհեստագիտական յարմարութիւններէն ու կը շարունակեն ապրիլ առանց անոնց ընծայած դիւրութիւններուն, չըսելու համար բարիքներուն։

Չեմ ուզեր անդրադառնալ նման պարագաներու, հակաճառել ի գուր, համոզուած, որ մարդկային անբռնաբարելի իրաւունքներուն մաս կը կազմէ նաեւ ընդդիմանալ յառաջդիմութեան։ Մէկ պայմանաւ սակայն, որ այդ ընդդիմութիւնը ի վնաս ուրիշին, ի վնաս ինծի պիտի չըլլայ։ Սեփական սահմաններուն մէջ, սեփական տան մէջ, մարդ կրնայ քարանձաւի կեանք ալ վարել, բայց եթէ դուրս գայ իր այդ սահմաններէն եւ ուզէ ուրիշին՝ ինծի՝ պարտադրել իր ապրելակերպն ու գաղափարները, այդտեղ բախում կը յառաջանայ։

Այս ակնարկով այդ բոլորին մասին չէ՛, որ կ'ուզեմ խօսիլ, այլ կ'ուզեմ վերադառնալ մե'ր պարտէջը, վերաբարձել փոփոխութիւններու հարցը մե'ր գաղութէն, աւելի ճիշտ՝ գաղթօճախէ՛ն ներս, — գործածելու համար աւելի ճշգրիտ բառը, — եւ ինչու ոչ՝ ընդհանրապէս բոլոր աւելի կամ պակաս մարդաշատ մեր գաղթօճախներէն ներս։

Առաջին անգամ չէ, որ այս հարցերը կը դնեմ սեղանի վրայ, սակայն քաջ գիտնայով, թէ որքան երկա՛ր ժամանակ կ'առնէ, մինչեւ որ առաջարկ մը սողոսկի մեր մտքերէն ներս, տեղաւորուի հոն, «որոճացուի» ու հասուննայ, ապա լուսամիտ ժողովներու ու ժողովականներու կողմէ որդեգրուի ու գործադրուի, այո, չեմ վարանիր անգամ մը եւս խօսիլ այս հարցերուն մասին, յանձնելու համար զանոնք պատկան մարմիններու ու գործող անձնանց ուշադրութեան։

Գիտէ՞ք, որ միշտ ջատագովը հանդիսացած եմ միջհամայնքային գործակցութեան, ատիկա՝ Մեծ եղեռնի յիսնամեակէն ի վեր, երբ ես ինքս տակաւին նորաբոյս երիտասարդ մըն էի։ Փա՛ռք Աստուծոյ... Մեծ եղեռնի հարիւրամեակին ու անկէ ասդին, այլեւս կարիքը չկայ, որ այս առնչութեամբ յաւելեալ ճիգ ընեմ, չունչ հատցնեմ։ Համագործակցութիւնը մտած է մեր բարքերուն մէջ, որքան ալ սկիզբը վարանոտ քայլերով, ու անհրեքիւրօրէն մաս կը կազմէ մեր իրականութեան՝ Մոնթրէալի մէջ թէ այլուր։

Համագործակցութիւնը, սակայն, խօսք չէ, այլ գործ է։ Եւ գործ է ոչ թէ պարզապէս պարբերական ձեռնարկներու կազմակերպութեան համար յառաջացած միացեալ յանձնախումբերով յառաջ տարուելու համար, այլ բոլոր ձեռնարկներն ու այլ նախաձեռնութիւններ լաւագոյն ձեւով իրականացնելու, գաղութին ներուժը լաւագոյն ձեւով օգտագործելու ալ հասկացողութեամբ։

Պիտի չխօսեմ միջհամայնքային դեկավար կառոյցներու յառաջացման ու նման բարդ առաջադրանքներու մասին, որոնք դիւրաւ լուծուելիք հարցեր չեն ու երկար ժամանակի պիտի կարօտին, եթէ ցանկալի են, կանոնակարգուելու ու գործադրուելու համար։

Այս յօդուածով փոփոխութեան մէկ առաջարկ պիտի դնեմ սեղանի վրայ։ Առաջարկ, զոր գործադրելու համար ոչ մէկ նոր կառոյցի կարիքը կայ, ոչ ալ յաւելեալ աշ–

խատանքի կարիքը, այլ միայն մեր ճիգերը համադրելու եւ համագործակցելու անհրաժեշտութիւնը, որուն գիտակցումը սակայն պէտք է բխի մտայնութեանց փոփոխութենէ մը։

Այդ՝ մեր քարոզչական աշխատանքի վերանայումն է, վերակազմակերպումը։ Այդ՝ մեր բոլոր կազմակերպութիւններու նախաձեռնութիւնները բոլորին տեղեկացնելու նպատակակէտը։

Իւրաքանչիւր կազմակերպութիւն մեծ ճիգ կը թափէ ձեռնարկ մը կազմակերպելու համար, ատիկա ըլլայ ճաշկերոյթ, հանդիսութիւն, երգահանդէս թէ թատերական ներկայացում։ Իւրաքանչիւրը կը ջանայ իր միջոցներով կատարել անոր քարոզչութիւնը, վաճառել տոմսերը՝ ներկաներու առաւելագոյն թիւը ապահովելու համար։ Ինչքան ալ ճիգ կատարէ, սակայն, լուրը ամբողջ համայնքին չի հասնիր, այլ անոր մէկ մասին, մէկ մեծ կամ փոքր մասին, նայած ի՛նչ հասցէացանկով, որո՛ւ հասցէացանկով կ'ուղարկուի ծանուցումը։ Չկայ պաստառ մը, չկայ կայքէջ մը, ուր առանց բացառութեան երեւին բոլոր «կողմ»–երու, յարանուանութիւններու, միութիւններու ձեռնարկները՝ եկեղեցական արարողութիւն ըլլան անոնք, ժողով թէ դաշտագնացութիւն։ Առանց բացառութեան, առանց խտրութեան, առանց նախապաշարումի, առանց ձեռնարկին որակի նկատողութեան։ Ամեն ինչ, որ հայութիւնը կրնայ հետաքրքրել, անոր մէկ մասնիկը կրնայ հետաքրքրել, ներառեալ ոչ–հայկական բայց հայութեան կամ հայու մը առնչուած նախաձեռնութիւնները։ Առայժմ չեմ իսկ արծարծեր թուականներու խաչաձեւումի երեւոյթը, որ քայլ մը աւելի կ'ենթադրէ։ Այդ մասին կարելի է ուրիշ անգամ ալ խօսիլ։

Նման առաջադրանք, սակայն, մի քանի բան կ'ենթադրէ։

Առաջին՝ մասնակցութեան պայմաններու յստակացում, օրինակ՝ կիրթ լեզու, լեզուական ճշգրտութիւն, փոքր սակ մը՝ ապահովելու համար ցանցավարի մը պատուագինը, որպէսզի պատշաճ կերպով տեղադրէ ծանուցումները, նոյնիսկ հաղորդագրութիւններն ու յայտարարութիւնները (որոնցմէ կը բացառուին որեւէ այլ մասնակից կազմակերպութեան դէմ արտայայտութիւնները, քանի որ իրար քննադատելու տեղը չէ հոն, մամուլ չէ, այլ չէզոք պաստառ մը միայն)։

Երկրորդ՝ այս մարզին մէջ, կամ այս կիրարկումին մէջ մրցակցութեան վերացումը, կամ մրցակցութեան տարբեր մօտեցում մը։ Այսինքն, եթէ մինչեւ հիմա իւրաքանչիւր կազմակերպութիւն կը ջանար միւսէն աւելի լայն ցանկի մը տիրանալ, որպէսզի միւսէն աւելի լայն հասարակութեան մը հասցնէր իր ծանուցումը, ասկէ ետք մրցակցութիւնը պիտի ըլլայ գերազանցել այդ ծանուցումին որակով ու ձեռնարկի՝ որակին յետազդեցիկ արձագանգով (յաջորդ ձեռնարկին ի նպաստ)։ Ուրեմն ցանկը բոլորին պիտի պատկանի ու կայքէջի վրայ դրուող նիւթերէն ոմանք կարելի կ'ըլլայ դիւրութեամբ ամբողջ ցանկին ուղարկել։

Երրորդ, կազմակերպութիւնները պիտի համաձայնին այս կայքէջի ցանցավարը ընտրելու համար, ցանցավար մը, որ գործին հմուտ ըլլայ ու երեք լեզուներուն ալ քաջածանօթ՝ ի հարկին նկատած վրէպները ծանուցումին տիրոջ ուշադրութեան յանձնելու համար։

Այս առաջարկը կրնայ մշակուիլ տակաւին ու ներառել տոմսերու սպառման միացեալ միակ առցանց պատուհանի մը (guichet unique) դրութիւնը եւ այլն։ Սակայն սկսինք այս մէկով։

Ասիկա կրնայ հանդիսանալ խնայողութիւն թէ՛ նիւթուժի եւ թէ՛ մարդուժի։ Բոլորին համար։

Պատրա՞ստ ենք նման փոփոխութիւններու ձեռնարկելու։

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

● ● ● ←

ւորութեամբ կը մօտենայ, եւ այսօր համաշխարհային մակարդակով հայկական իրականութեան մէջ միայն մենք ենք ջաւախահայութեան հարցը արծարծողը, որովհետեւ պետութիւնը կը փորձէ խուսափիլ ատկէ։ Չեմ գիտեր, թէ որքա՛ն ճիշդ է ատիկա, բայց մենք միշտ պահանջող եղած ենք, որ աւելի յանդուգն քաղաքականութիւն վարէ Հայաստանը, մանաւանդ՝ դասագիրքեր տրամադրելու, հայերէնի մակարդակը բարձրացնելու, այնտեղ համալսարան հաստատելու առումով, եւ եթէ անիրաւութիւններ կան՝ իբրեւ ազգային փոքրամասնութիւն, այդ անիրաւութիւնները նշելու՝ վրացական կառավարութեան։ Օրինակ, ընտրական օրերուն յատուկ ճնշում կը բանեցուի, որ միայն վրացական իշխանութեան ուղղութիւններուն հլու հնազանդ ենթարկուողները ընտրուին որպէս հայկական ներկայացուցիչներ վրացական խորհրդարանին մէջ. ասիկա ժոռ

ղովրդավար երկրի մը համար ընդունելի երեւոյթ չէ, ասոր մասին կրնանք խօսիլ, կրնանք բարձրաձայն ըսել, եւ մենք կ'ըսենք, բայց միայն մենք կ'ըսենք, նաեւ՝ Վրաստանի դեսպաններուն հետ հանդիպման ժամանակ, որ Վրաստանին համար իսկ նպաստաւոր չէ այն իրողութիւնը, որ ջաւախահայութեան չարտօնուի իսկական ներկայացուցիչներ զրկել թիֆլիս, որպէսզի նաեւ խորհրդարանին մէջ քննարկուին, ինչպէս այլ փոքրամասնութիւններուն, նաեւ հայութեան հարցերը։ Սա մանաւանդ անընդունելի է, երբ նկատի կ'ունենանք, որ Վրաստան կը ձգտի Եւրոպական միութեան անդամակցութեան եւ ինքզինք կը ներկայացնէ այսօր որպէս Եւրոպայի արժէքներու մեծագոյն ջատագովը այդ շրջանին մէջ. ասիկա անշուշտ իրականութեան չի համապատասխաներ, բայց նուազագոյնը այդ իրենց միտումի, բաղձանքի արտայայտութիւնն է, որ լաւ է, բայց այդ ուղին բռնած երկիրը չի կրնար այսպիսի ձեւով վարուիլ իր ազգային կարեւորա

գոյն փոքրամասնութեան հետ, որն է՝ հայութեան պարագան։ Ուրեմն մենք կ'օգտուինք Եւրոպայի օրէնքներու ընձեռած հնարաւորութիւններէն, որովհետեւ ունինք աշխուժ գրասենեակ Պրիւքսելի մէջ, նաեւ յանձնախումբեր՝ Եւրոպայի մեծ երկիրներուն մէջ։ Այս բոլոր միջոցներով նաեւ կ'աշխատինք ճնշում բանեցնել Վրաստանի կառավարութեան վրայ, Վրաստանի իշխանութեան ներկայացուցիչներուն վրայ, որ պէտք է յարգեն իրենց իսկ ստանձնած յանձնառութիւնները եւ տուած խոստումները Եւրոպային, որ՝ պէտք է հաւասար աչքով դիտեն ազգային փոքրամասնութիւնները, մանաւանդ՝ հայութիւնը։

Մեծագոյն հարցերէն մէկը, բնականաբար, ջաւախահայութեան համար տնտեսական տագնապն է. Դաշնակցութիւնը փորձած է հոն ստեղծել յատուկ հիմնադրամ՝ ոչ քաղաքական պարունակով, պարզապէս՝ ներդրումներ կատարող, տեղւոյն տնտեսութեան օժանդակող, բայց ընդհանուր վիճակին պատճառով

հաւանական ներդրողները միշտ քիչ մը կը վարանին։ Աշխատանք կը տարուի, որ եթէ Եւրոպան յատկացնէ որոշ գումարներ՝ ենթակառուցուածքներու եւ ճանապարհահանգիստութեան, որ բաժին հասնի նաեւ Զաւախքին եւ ոչ թէ միայն մնայ թիֆլիսին եւ՝ չորս կողմի վրացական գիւղերու եւ քաղաքներու մէջ. ուրեմն այդ իմաստով բաւական լուրջ աշխատանք կայ, կը փորձենք Զաւախքի մեր ընկերները, մեր պատասխանատուները դուրս հանել, որպէսզի իրենք բացատրեն կացութիւնը՝ շատ հանդարտ, տրամաբանական ոչ զգացական ձեւով, որովհետեւ մեր նպատակը ներքին ըմբոստութիւն յառաջացնել չէ, այլ ապահովել, որ իրենք ունենան մարդավայել կեանք՝ առանց որեւէ բան գիջելու իրենց իրաւունքներէն՝ որպէս ազգային խմբաւորում։

Հարցազոյցը վարեց՝ ԾՈՂԵՐ

ՄԽՃԵԱՆ

Արտագրեց՝ ՍԻԼՎԻ ԱԲԷԼԵԱՆ

(Ծար. 2 եւ վերջ)



«ՈՒՒՏԻՆ ՏԱՊԱՆԱԿԸ»

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Ամթիլիաս Փոխադրութիւնը

ԿԻԼԻԿԻՈՅ ԱՂԷՏԸ

3. Ե
Կուսակալը՝ ձէվատ պէյ պաշտօնանկ կ'ըլլար551, եւ իր տեղը կը նշանակուէր Մուսթաֆա Զիհնի փաշա:

Ժամանակ օրաթերթը այս նշանակման կապակցութեամբ իր վերապահութիւնը արտայայտած է, ըսելով. «Ատանայի Կուսակալ անուանուել է Քէրպէլայի նախորդ կառավարիչ՝ Մուսթաֆա Զիհնի փաշա: Զիհնի փաշան թէ՛ եւ մօտիկ ճանչնալու առիթը չենք ունեցած, բայց տրամաբանօրէն դատելով՝ կ'ըսենք որ այսչափ խռոված ու բորբոքած նահանգ մը ուղղութեան բերելու գործը Քէրպէլայի մը կառավարիչին յանձնելը՝ բնաւ ապահովութիւն չի ներշնչեր անդորրութեան վերահաստատումին (...): Քէրպէլայի Միւթէսարըֆը Ատանայի Կուսակալ կարգելը՝ պարզապէս Ատանայի նահանգը բախտին եւ դիպուածին ձգել՝ ըսել է»552:

Թէեւ Զիհնի փաշայի նշանակման պիտի հետեւէր Ատանայի ջարդին երկրորդ եւ ամենակործան հարուածը, սակայն մինչ ձէվատ պէյ պիտի դատապարտուէր553, Զիհնի փաշա դատապարտութիւն պիտի չտեսնէր: Ամբողջ աղէտին պատասխանատուութիւնը գինք կանխողին եւ անոր դաւակիցներուն միայն պիտի վերագրուէր, կամ անոնց վրայ պիտի պահուէր554:

Նոյն ատեն երբ կոտորածները օրեր կը փոխէին այլ տեղերու մէջ, եւ շարք մը տեղերու մէջ ալ ձգուէին յետագայ ամիսներուն վրայ, Ատանա քաղաքի «երկրորդ ջարդ»ը սկսաւ 12/25 Ապրիլին, երբ «Ազատութեան բանակ» գինուորները ժամանած էին նահանգ555: «Երկրորդ ջարդ»ը տեւեց մինչեւ 14/27 Ապրիլ:

Սկսած օրը, քաղաքին մէջ յանկարծ «վայրկեանէ վայրկեան իրարանցում»ը բազմապատկուած էր եւ սարսափը ընդարձակուած556: Ամենուր՝ ընդդէմ կեաւորներուն սպառնական բարկաճայթ գոռում-գոչումներ, որոնք անոնց մահ կը ցանկային, ապա՝ բրտութեան պատրուակներ հնարելու ճիգեր:

Առաջին ջարդին վերաբերող իր տեղեկագրին մէջ, ձէվատ պէյ անոր մեկնակէտին յիշած է հոմանուհիի մը պատճառով ոմն Յովհաննէսի ձեռամբ վիրաւորուելը էսֆենտիւր եւ Բահիմ անունով իսլամներու557: Թերզեան երկ-

րորդ ջարդին պատրուակը եւ հետեւած բրտութիւնը ցոյց տուած է սա նկարագրութեան մէջ.

Իբրեւ թէ 12 տարեկան հայ պատանի մը ետդ-ձամին կրակի տալ էր ուղած, սակայն չյաջողելով՝ փախուստի դիմած էր: 50 փաթթոցաւոր սօֆթաներ անոր հետեւէն ինկած էին, պոռալով՝ «Տուժո՛ւն, տուժո՛ւն, կեաւուրն օղու ետդ ձամիսինէ աթէշ վէրիոր իտի»:

Պատանին հալածողները իրենց գէնքերով կրակ էին բացած: Նոյն ատեն, անդին՝ հեռուն խռնուած ամբոխէն տարրեր՝ ճաշի նստած նորեկ գինուորներուն վրայ կրակ էին բացած, եւ արագօրէն փախուստ ձեւացնելով անոնց մօտ վազած, իբր թէ լուր տալու՝ որ հայ ֆէտայիներ թուրք թաղերու վրայ յարձակած են, իսլամներ կը ջարդուէին եւ գինուորները պէտք է աճապարէին օգնութեան հասնելու: Եւ ահա սօֆթաներու վազվզուքին յաջորդած էր արշաւը բանակայիններու, որոնք ամէն կողմ կրակ թափած էին558:

Վկան գրած է. «Ողբ, կոծ, վայնասուն, օգնութեան աղաղակներուն՝ հրագէտներու ձայները, հրեհներու ճարձատիւները իրարու խռնուած՝ առաջին աղէտէն հազարապատիկ աւելի աստիճան սոսկալի ահ ու դողի մատնեցին զմեզ: Առաջինին, գոնէ մէյ մէկ գէնք ունէինք եւ անոնց կը վստահէինք, սակայն հիմա ամէն բանէ զրկուած, առանց ամենափոքր ընդդիմութեան մը, պիտի ջարդուէինք կամ այրուէինք անվրէպ...»559:

Ամերիկացի միսիոնար մը աղէտին ահաւորութիւնը արձանագրելով, ըսած է. «Անկարելի էր փողոցներուն մէջէն քալել՝ առանց դիակի մը վրայ կոխելու: Շուները խրախճանք կը կատարէին դիակներու վրայ: Յօշոտումները սարսափելիօրէն աննկարագրելի էին...»

Երեք օրերու վրայ «մահու եւ կենաց մէջ» պիտի օրօրուէր Ատանայի կեաւուր բնակչութիւնը: Թերզեան իր պատառոտեալ յիշատակները աւարտած է այսպէս. «Տիւրք օրեր եւ սարսափազնիւ ժամեր, որոնց մոռացումը անկարելի է եւ անշուշտ մեր թոռներն ու թոռնորդներն անգամ պիտի յիշեն եւ յիշուին մեր քաղած այն սոսկալի տառապանքները: Կիլիկիոյ խորիւստ ու պերճաշուք քաղաքը՝ Ատանան, որ երբեք չէր հաճած

ողորմութիւն խնդրելու եւ նպաստ մուրալու, ահուկի աղէտէն ետքը ստիպուեցաւ ձեռք բանալ հանրութեան եւ նպաստ խնդրել, ողորմութիւն հայցել»561:

Ջարդեր եւ աւերումներ համաժամանակ գործադրուեցան Ատանայի նահանգին այլ քաղաքներուն, գիւղաքաղաքներու եւ գիւղերու մէջ: Ատանայի նահանգին մէջ գոհներուն թիւը՝ 21, 330562:

Սիսի, Հաճընի, Մարաշի, Չորք-Մարգպանի եւ Զէյթունի մասի՞ն:

Սիսը, Հաճընը, եւ Չորք-Մարգպանը ինքնապաշտպանութեան դիմեցին: Վերջինին պայքարը ամենէն երկարը տեւեց: Հաճընը թէ՛ ինքնապաշտպանութեան իր պայքարին եւ թէ՛ Ատանայի շրջակայ գիւղերուն պաշտպանութեան համար 3000 քաջեր զոհ տուաւ, եւ խորտակուեցաւ563:

Մարաշ քաղաքը իր «թուրք եւ հայ երեւելիներու համերաշխութեան շնորհիւ» ազատեցաւ աղէտէն, բայց գաւառին գիւղերէն ոմանք «ենթարկուեցան Ատանայի նահանգին մէջ տիրող խռովութեան ազդեցութեան»564: Քաղաքին եւ գիւղերուն անձի կորուստ 783 եղած է565:

Ոճրային ձեռքերը Զէյթունին չմօտեցան, սակայն պիտի չուշանար անոր գլխուն վրայ դաւի մը սարքումը:

Հալէպը, որ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանիին ներքեւ նահանգ էր, իր կարգին ջարդեր եւ աւերումներ տեսաւ: Հոն 368 անձեր կոտորուած են566:

Ատանայի եւ Հալէպի նահանգներուն «արկածեալ վայրեր»էն անցնելով, ակնատես մը սոսկումով յիշած է. «անվերջ աւերակներ, մարդախոշոշ խուժանի մը վայրագ արարքներուն ահուկի հետքերը...մօտէն տեսայ ժահն ու աւերը, սուգն ու թախիծը, մոխրացած տուներն ու չորացած կմախքը»567:

Սահակ Կաթողիկոս, երբ պիտի կարենար շրջիլ, եւ «իւր ճամբուն երկայնքը արցունքէ պղտորած աչքերովը» տեսնէր, համբեր «իւ հօտին քանիներու դիակները, դաշտերուն մէջ ինկած, անգողներէ ու գայլերէ յօշոտուած՝ պիտի աղաղակէր՝ «Եթէ իմ Աստուածս այս անօրէններուն, այս գազաններուն ալ Աստուածն է, ես Աստուծոյ չեմ հաւատար, ես Աստուծոյ չեմ հաւատար...»588:

ԳԱՌՆԻԿ Ա. Բ. Գ.

ԱՂԲԻԻՐՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

551.- Ատանայի Կառավարիչը եւ Մերսինի Կառավարիչը Պաշտօնանկ, Ժկ, 7-20 Ապրիլ 1909, էջ 1:

552.- Ատանայի Նոր Կուսակալը, Ժկ, 10-23 Ապրիլ, 1909, էջ 2:

553.- Ատանայի Նախորդ Կուսակալը եւ Նախորդ Զինուորական Հրամանատարը Դատապարտուած, 18-31 Օգոստոս 1909, էջ 2:

554.- Ամերիկացի միսիոնար մը գրած է. «մեր աչքերով տեսանք Վալիի յանցաւոր մեղսակցութիւնը այս ջարդի դաւադրութեան մէջ», ԹԿԱ, էջ 134: Քանի մը ամիս վերջ, հայոց արդարութեան սպասումին ի պատասխան՝ Նախարարներու Խորհուրդը պիտի բաւարարուէր Կուսակալը «եւ կանչել» լով եւ անոր տեղ կարգելով ձէվատ պէյը, Հայկական Լուրեր, 14-27 Օգոստոս 1909, էջ 3:

555.- «Ազատութեան բանակ»ը այն էր, որ Մարտ 31-եան շարժումը ընկճեց, եւ կրկին հաստատեց Իթիհասատական իշխանութիւնը: 11/24 Ապրիլին, այս բանակէն 850 հոգինոց երեք վաշտ հասած էր Ատանա —

Ի՞նչ Կ'ըսէ ձէվատ Պէյ, 12-25 Մայիս 1909, էջ 1:

556.- ԹԿԱ, էջ 98:

557.- Ի՞նչ Կ'ըսէ ձէվատ Պէյ, 12-25 Մայիս 1909, էջ 1:

558.- ԹԿԱ, էջ 99-101: 99-րդ էջին ներքեւ կայ այս նօթը. «Ետդ ձամիսի կոչուած մզկիթը ամբողջութեամբ քարաշէն է եւ անկարելի է, որ այրի»:

559.- Ն, էջ 101:

560.- Ն, էջ 127:

561.- Ն, էջ 234:

562.- Ն, էջ 254:

563.- Ըստ Թերզեանի, Կիլիկիոյ ջարդին մէջ ամենէն աւելի վնասուողը եղաւ Հաճընը: «Հաճընի երբեմնի շէն թաղերը եւ կորիւններու բոյները այսօր որչաքով եւ այդի կրնորով լեցուած են», գրած է ան — Ն, էջ 234:

564.- Ն, էջ 264:

565.- Ն, էջ 268:

566.- Ն, էջ 267: Կիլիկիոյ աղէտին, ներառեալ Հալէպի կոտորածներու զոհներուն թիւը պիտի անցնէր 30, 000-ը:

567.- Խնդիր Սիմօնեան, Նօթեր Ատանայէ, Նախարար, Ազատամարտ, 22 Սեպտեմբեր 1909, էջ 1:

568.- Սուրէն Պարթեւեան, Կիլիկիոյ Արհաւիրքը, Կ. Պոլիս, 1909, էջ 169: Յետ այսու՝ ՊԿԱ:



SILVA SARKISSIAN
DENTUROLOGISTE
(514) 998-0928

19 տարուայ փորձառութիւն

Fabrication et réparation de
PROTHÈSES DENTAIRES



Ատամնաշարի պատրաստութիւն,

Polyclinique de Montréal - 12245 Grenet, local 203, Mtl.
www.cartierville-denturologiste.com



Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը՝ / Visit our new website
www.arsarmenianschool.ca

Մոնթրէալի Հայ Աւետարանական Եկեղեցի
Կլոր սեղան

Նիւթ՝
Հայ լեզուն, հայ մարդը եւ հայ հոգին՝ այսօր

Նիւթը ներկայացնողներ
Հայ լեզուն- Վահագն Գարագաշեան- խմբագիր՝
«Հորիզոն» շաբաթաթերթին
Հայ մարդը- Աւետիս Պազգալեան- խմբագիր՝
«Ապագայ» շաբաթաթերթին
Հայ հոգին- Ռաֆֆի Պուժիգանեան- Լրագրող՝ CBC-ի

Շաբաթ, 7 Հոկտեմբեր 2017-ին, երեկոյեան ժամը 7:30-ին,
Մոնթրէալի Հայ Աւետ. Եկեղեցիին մէջ
(123 Boulevard Des Prairies, Laval, Québec, H7N 2T6)

Մուտքը ազատ

ԳՐԱԽՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

ՄՐՆԹՐԷԱԼ

Պատրաստուեցէ՛ք Սուրբ Յակոբ եկեղեցւոյ Տարեկան Պարահանդէսին,
24 Դեկտեմբեր 2017-ին,
մասնակցութեամբ ԷԼԻ ՊԷՐՊԷՐԵԱՆԻ եւ իր նուագախումբին:
Մանրամասնութիւնները յաջորդիւ:

Ս. ՅԱԿՈԲ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ «Վ. եւ Ա. ՍԱՐԱՖԵԱՆ» ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ եւ
«ԲԱՍՏՐՄԱՃԵԱՆ» ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԻ **ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՐՈՅԹ**
Շաբաթ, 14 Ապրիլ 2018-ին

ԹՈՐՈՆԹՕ

Շաբաթ 28 Հոկտեմբեր 2017
Թորոնթոյի Հայ Օգնութեան Միութեան «Ռուբինա» մասնաճիւղ
ՏՈՀՄԻԿ ՕՐ - 24-րդ - Զօնուած՝
Նախիջեւան նահանգին եւ 5 գաւառներուն՝
Գողթան, Երնջակ, Հաիուկ, Նախիջեւան եւ Շարուր

ԼԱԻԱԼ

ՀՄԸՄ ԼԱԻԱԼ
Մարզական եւ Սկառուտական արձանագրութիւններ
ամէն երեկոյեան ժամը 7-8
հեռաձայնել 514 979 6272 եւ 514 295 3245 թիւերուն
Homenetmen Laval Դիմատետրի (Facebook) էջով

Ուրբաթ, 27 Հոկտեմբեր 2017-ին
Լաւալի Հայ Օգնութեան Միութեան «Շուշի» մասնաճիւղ
«Halloween»
«Centre Armenie», 1025 Blvd Elisabeth Laval, Qc.

ԼԱԻԱԼ

ՀՄԸՄ Լաւալի երկօրեայ 26 եւ 27 Օգոստոս 2017 Դաշտահանդէսի վի-
նակահանութեան շահող տոմսերու թիւերն են.- 8311, 8831, 8433, 8253,6185,
5075,6148, 5415, 8763, 6465, 8956, 9920

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀՄԸՄ Լաւալի վարչական կազմը կը շնորհաւորեն եղբայր Կարօ Իս-
կէնտէրեանն ու տիկնոջ, թոռնիկով մը բախտաւորուելուն առիթով:

ԳՈՐԾԻ ԱՌԻԹ

COIFFURE GARO վարսայարդարման
սրահը կարիքը ունի կանանց
վարսայարդարի՝ 2 տարուան
փորձառութեամբ:

Հետաքրքրուողներէն կը խնդրուի
հեռաձայնել 450 973-9019 կամ
514 978-4468 թիւերուն:



Taxi Mirabel ընկերութիւնը կարիքը ունի վերակացուի մը, որ
պէտք է խօսի արաբերէն, հայերէն, անգլերէն եւ ֆրանսերէն,
նաեւ պէտք է ունենայ հաշուապահութեան վկայական եւ
փորձառութիւն, (աշխատաժամ՝ շաբաթական 40 ժամ):

Հետաքրքրուողները իրենց ինքնակենսագրականը (CV)
կրնան դրկել այս հասցէին (emploitaxi@gmail.com) կամ
կրնան հեռաձայնել Արա Մոսճեանին 514-979 1317:

ՄՐՆԹՐԷԱԼ

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ Աստուածաշունչի սերտո-
ղութեան 2 խմբակները արդէն իսկ վերսկսած են իրենց երկշաբաթական
հանդիպումները՝ հոգաբարձութեան ժողովասրահէն ներս.

- «ՆՈՐԱՎԱՆՔ» խմբակ, 16-25 տարեկան երիտասարդ/երի-
տասարդուհիներու համար՝ Կիրակի առաւօտեան ժամը
9.45-10.45

- «ՆԱՐԵԿ» խմբակ, 26-40 տարեկան երիտասարդ/երիտա-
սարդուհիներու համար՝ Կիրակի առաւօտեան ժամը 10.30-
11.30:

Հշգրիտ թուականները գիտնալու եւ յաւելեալ մանրամասնութեանց
համար հեռաձայնել եկեղեցւոյս դիւանատուն. 514 331 5445 կայան 202՝ Կարօ
Սրկ. Նոխտետեանին:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այսու մեր խորին շնորհակալութիւնները կը յատնենք Տէր Գառնիկ
ֆինյ. Գոյունեանի, Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ հոգաբար-
ձութեան, ՀՅԴ «Սարգիս Զէյթլեան» կոմիտէութեան եւ բոլոր անոնց որոնք
անձամբ, հեռաձայնով, կամ նուիրատուութեամբ մասնակից եղան մեր
սուգին, մեր սիրելի եղբօր, հօր, մեծ հօր, հարազատին՝, ողբ. **ՃՈՆԻ ԱՐԵՒ-
ԵԱՆ**-ին մահուան տխուր առթիւ: Սգակիրներ՝ Արեւեան ընտանիք:

ԺՈՂՈՎՆԵՐ

**ՀՕՄ-Ի ՄՐՆԹՐԷԱԼԻ «ՍՕՍԷ» ՄԱՄՆԱՃԻԻՂԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԺՈՂՈՎ.** Երեքշաբթի, 3 Հոկտեմբեր 2017-ին: Երեկոյեան ժամը 7:30ին հիւրա-
սիրութիւն, 8:00-ին՝ ժողով:

**ՀՕՄ-Ի ԼԱԻԱԼԻ «ՇՈՒԾԻ» ՄԱՄՆԱՃԻԻՂԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴ-
ՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ.** Զորեքշաբթի, 4 Հոկտեմբեր 2017-ին, երեկոյեան ժա-
մը 8:00-ին, Լաւալի Հայ կեդրոն:

**ՀՕՄ-Ի ԹՈՐՈՆԹՈՅԻ «ՌՈՒԲԻՆԱ» ՄԱՄՆԱՃԻԻՂԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱ-
ՆՈՒՐ ԺՈՂՈՎ.** Երեքշաբթի, 3 Հոկտեմբեր 2017-ին, երեկոյեան ժամը 8:00-ին,
Թորոնթոյի Հայ կեդրոն:

Voyages

HAIG

Travel

Ձեր բոլոր ճամբորդական
Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

**ԼԱԻԱԿՈՅՆ ՄՊԱՄԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐԱԿՈՅՆ ԳԻՆԵՐ**

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

[AB]

ALINE

BEKEREJIAN

NOTAIRE • NOTARY

ՆՈՏԱՐ Ալին Պէքըրէճեան

[AB]

Achat

Արեւտուր

Purchase

Hypothèque

Սնշարժ Կալուածք

Mortgage

Refinancement

Վերաֆինանսաւորում

Refinance

Mandat

Պատուէր

Mandate

Testament

Կտակ

Will

Succession

Կալուածք

Estate

Marriage

Ամուսնութիւն

Marriage

Procurator

Փոխանորդագիր

Power of Attorney

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222

F 514.381.1818

aline.b@notarius.net

www.abnotaires.com

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais
Services offered in Arabic, Armenian, French and English.

Ծառայութիւնները կը մատուցուին Արաբերէն,
Հայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

horiZon

H O R I Z O N
Hebdomadaire arménien
Armenian Weekly
Publié par / Published by
Les Publications Arméniennes
(1991)
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

Abonnement annuel /
Yearly subscription
Canada
2^e classe - 2nd class: \$80
plus applicable taxes
1^{re} classe - 1st class: \$95
États-Unis / USA
1^{re} classe - 1st class: \$95 US
Ailleurs / Elsewhere
1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
Sylva Ehamdjian-Bachekjian
(General Manager)
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail: sylv@horizonweekly.ca
Courrier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales
du Québec et du Canada - ISSN 0708580X

Վարիչ Խմբագիր՝
Վահագն Գարազաշեան
Վարչական պատասխանատու՝
Սիլվա Պաշըզճեան
Քարտուղար՝ Մարինա
Տէր Խաչատուրեան
Աագ Խմբագիր՝
Վրէժ-Արմէն Արքիմեան
Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Արքա-
համեան, Թինա Սիլահեան
Չնաւորում՝ Նէմսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնիա Աճէմեան
Սոնա Թիթիզեան-Կէտիկեան

**Թորոնթոյի
Ներկայացուցիչներ՝**

Գրիգոր Հոբոյեան, (416) 494-1921
Ժազ Վարպետեան, (416) 722-9225

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Գալուստ Պապեան, Վազգէն Տէկիրմէնթաշ,

Financé par le
gouvernement
du Canada

Funded by the
Government
of Canada

Canada

ՀՈՐԻԶՈՆ, 25 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2017 9

ԱՍՏՂԱԳՈՒԾԱԿ



ԽՈՅ (21 Մարտեն 20 Ապրիլ) - Այս շաբաթ աստղերը քեզի պիտի պարզեւեն հաւասարակշռուածութիւն եւ աշխուժութիւն։ Այս մէկը պիտի սատարե քու ծրագիրներուդ իրագործման։ Դիւանագիտական յարաբերութիւններդ բաւական յաջող կ'ընթանան այս շրջանին։

ՅՈՒԼ (21 ԱպրիլԼեն 21 Մայիս) - Մարմնական կարողութիւններդ բաւական բարձր են այս շաբաթ, այդ պատճառով ալ գործերդ շատ լաւ կ'ընթանան, միեւնոյն ժամանակ ինքզինք փաստելու պահանջը կը զգաս ամեն վայրկեան, պետք չունիս ինքզինքդ չարչրկելու այդքան։

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 ՄայիսԷն 21 Յունիս) - Գործընկերներդ եւ գործատերդ շատ գոհ են քեզմէ այս շրջանին։ Միշտ մէջտեղերն ես եւ բոլոր հարցեանն դրական ներդրում կ'ունենաս։ Սակայն այս բոլորը շուրջիններուդ նախանձը կը շարժե, զգոյշ ըլլալու ես անոնց նկատմամբ։

ԽԵՅԳԵՏԻՆ (22 ՅունիսԷն 23 Յուլիս) - Նոր գաղափարներդ եւ առաջարկներդ յայտնելու մի՛ վարանիր, գործընկերներդ եւ գործատերդ հասկացողութիւն պիտի ցուցաբերեն անոնց հանդէպ եւ բաւական ուրախ պիտի ըլլան այս փոփոխութիւններով եւ նորութիւններով։

ԱՌԻԻԾ (24 ՅուլիսԷն 23 Օգոստոս) - Ինքզինքդ վտանգի կ'ենթարկես այս շրջանին, կ'ուզես նպատակիդ հասնիլ ամեն գնով, բայց անբարենպաստ պայմանները ջղային դարձուցած են քեզ, այդ պատճառով ալ ժխտական եւ յարձակողական եղած է վերաբերմունքդ շուրջիններուդ հետ։

ԿՈՅՍ (24 ՕգոստոսԷն 23 Սեպտեմբեր) - Այս շրջանին աւելի զօրաւոր կը զգաս ինքզինքդ, սովորականէն շատ աւելի բարձր եւ ներուժդ մանաւանդ այս շաբաթ, հետեւաբար օգտուիր այս առիթէն եւ իրագործէ այն ինչ որ կը հետաձգէիր յաճախ։ Բարեբեր շաբաթ մըն է։

ԿՇԻՈՔ (24 ՍեպտեմբերԷն 23 Յոկտեմբեր) - Յոգ տար առողջութեանդ այս շաբաթ, թշնամիներով շրջապատուած ես, նախանձոտ մարդիկ գիշեր-ցերեկ կը հետապնդեն լուրերդ, այս մէկը կը մտատանջե քեզ, այդ պատճառով ալ կրնաս հիւանդանալ, հետեւաբար զգոյշ եղիր։

ԿԱՐԻԾ (24 ՅոկտեմբերԷն 23 Նոյեմբեր) - Անհոգ վերաբերմունք ունիս առողջութեանդ նկատմամբ, այս մէկը կը վնասե քեզի, հոգ տար ուտելիքներուդ, սննդարար ճաշատեսակներով սնուիր այս շրջանին, որովհետեւ բաւական ճնշուածութիւն կ'ապրիս գործիդ մէջ։

ԱՂԵՂՆԱՌՐ (24 ՆոյեմբերԷն 21 Դեկտեմբեր) - Մի՛ փորձեր կարծիքդ պարտադրել շուրջիններուդ, պարտաւոր ես յարգել իրենց կարծիքները եւս, միշտ չէ, որ քու մտածածդ ճիշդ է, համբերող եւ լսող եղիր, շատախօսութենէ հեռացիր այս շրջանին, որպէսզի անիմաստ գրոյցներու չքնուիս։

ԱՅԾԵՂԶԻՐ (22 ԴեկտեմբերԷն 20 Յունուար) - Աւելորդ ինքնավստահութիւն մը կը տիրէ տրամադրութեանդ այս շաբաթ, շուրջիններդ ալ կը նկատեն այս մէկը , սակայն կը փորձեն հասկացողութեամբ վերաբերիլ, փոխէ՛ այս ընթացքդ, այլապէս պիտի կորսնցնես սրտակից բարեկամներդ։

ԾՈՎԱՆՈՅԸ (21 ՅունուարԷն 19 Փետրուար) - Կը փորձես քանի մը գործ միեւնոյն ժամանակ ընել, այս մէկը կը ջլատե քեզ, հակառակ որ դուն ոչ մէկ տկարութիւն կը զգաս հիմակուհիմա, սակայն եթէ այսպէս շարունակես յանկարծ անախորժելի անակնկալներու դէմ յանդիման պիտի գտնուիս։

ՁՈՒԿ (20 ՓետրուարԷն 20 Մարտ) - Այնքան հաւասարակշռուած է վերաբերմունքդ, որ գործախորջող ուշադրութիւնը կը գրաւէ այն մեծապէս կը վստահի քեզի։ Օգտուէ՛ այս առիթէն եւ ամսագանի յաւելլում պահանջե, անմիջապէս պիտի ընդառաջե, որովհետեւ գոհ է քեզմէ։

www.yerkir.am

ՀՈՐԻԶՈՆԻՆ ՈՐը. Գալուստ Պապեանի մահուան առթիւ
Բժ. ՄՀեր Պապեան, Լոս Անճըլըս 200ամ.

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՖՈՒՇՏՈՒ
Յովհաննէս Ոռզողեանի մահուան առթիւ
Արաքսի Ոռզողեան 300
Տ. եւ Տ. Վահան Ոռզողեան, զվք. 200
Յարութ, Սայրի Իսկէնեան, զվք. 200
Հրանդ, Սայրի Ոռզողեան 200
Գէորգ, Նորա Փօլաթ, զվք. 100
Վիգէն, Տայան Ոռզողեան, զվք. 100
Տոմինդ, Ալին Փօմփա, ընտք. 100
Մարալ Գոնիպեան 50
Տ. եւ Տ. Պետրոս Նալբաթեան 60
Գրեգոր, Մարալ Թորիկեան 60
Տ. եւ Տ. Յարութ Ձեքչեան 70
Նորայր, Մովիկ Մէրէնիկլեան 50
Մի ուն 20
Nada Debs 20
Մինաս, Շողեր Հօփուրեան 20
Տ. եւ Տ. Շանթ Տարազեան 50
Էլի, Լինտա Ջաքուր 50
Մի ուն 500
Տ. եւ Տ. Սեւան Իսթանպուլեան 50
Տ. եւ Տ. Մանուէլ Քէօսէան 50
Բըշ. Կարօ Սրկ., Հերա Նոխտեան 30
Թադէոսեան ընտք. 30
Գառնիկ, Միա Հաջագործեան 40
Վարդան, Սեդա Իսկէնեան 75
Պետրոս, Մայտա Գաբրիէլեան 30
Արթթ, Թամսար Սլիքաճեան, ընտք. 30
Պաղտասար, Անի Աւետիքեան Տիվալաշ 50
Թօփճեան եղբարք 50
Տ. եւ Տ. Մեսրոպ Նալպատեան 30
Սեդա Թուրիկեան 40
Արշալոյս Յովհաննէսեան Ձեքչեան 20
Ասօ, Անի Ձեքչեան 20
Յակոբ Ձեքչեան 20
Թէրէդ Թէրքանեան 50
Վարդուհի Փանոսեան 50
Յարութ, Զեփիւռ Տէր Աշոտեան 100
Անահիտ Վանդեան 30
Տ. եւ Տ. Թորոս Պապիկեան 100
Պետիկ, Սոնիկ Վարձպետեան 50
Տ. եւ Տ. Գրեգոր Թիֆֆլիսճեան 20
Տ. եւ Տ. Սերբ Գարայեան 20
Տ. եւ Տ. Վիգէն Ձեքչեան 30
Տիգրան, Պերճուհի Քէշիկեան 100
Րաֆֆի, Մովսիսար Փիլիպոսեան 50
Կարպիկ, Մարի Ձեքչեան 40
Sebbi, Silva Lole 50
Անորէ, Նաթիպի Պէշեան 50
Մէրէնա Թողաթեան 40
Տ. եւ Տ. Րաֆֆի Թողաթեան 50
Համբիկ, Լուսի Գարայեան 40
Տ. եւ Տ. Ասօ Ձեքչեան 50
Տ. եւ Տ. Հրակ Ձիշիկեան 20
Տ. եւ Տ. Անդրանիկ Ջուրեան 40
Տ. եւ Տ. Սեւակ Ջողապեան 40
Տ. եւ Տ. Նազօ Ելանկոզեան 20
Տ. եւ Տ. Կարօ Միքայէլեան 20
Տ. եւ Տ. ՄՀեր Վարդապեան 20
Տ. եւ Տ. Կարօ Թուպի 100
Տ. եւ Տ. Մաքսուտ Թուրշուճեան, զվք. 100

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԵՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
Եկեղեցւոյ Պայծառութեան Թաղուհի Մարտիրոսեան 20
»Տէր Ողորմես«ի խնդանօք Շողիկ Նաճարեան 20
Շաքէ Տէր Մելքոնեան Մինասեանի 40-ին

Սաբիդ, Տէր Մելքոնեան ընտրենք 500
Բըշ. Կարօ Սրկ., Հերա Նոխտեան 25
Եսայեան, Յակոբեան, Մաճաբեան, Ջորպաճեան, Պետրոսեան, Տէմիրճեան, Գուլաճեան գերդաստանաց ննջեցեցոյ
Կարպիկ, Սոնա Եսայեան, զվք. 25
Սիմոն, Սիլվա Տէմիրճեան, դուստր 25
Սեւակ, Բրիթիկն Եսայեան, զվք. 20
Նշան, Սըրուհի Նշանաններու, Մարի Մուրասեանի Հոգւոյ,
Նշանեան, Մուրասեան, Սէֆէրեան, Ասատուրեան, Զօհրապեան գերդաստանաց ննջեցեցոյ
Արամ, Լուիզ Նշանեան 100
Ռուբէն, Մարօ Նշանեան 50
Նշան Կիլիվանէսեանի մահուան)Լիբանան(7-օրէքն
Տ. եւ Տ. Գառնիկ Կիլվանէսեան 30
Զաւէն, Նոյեմի, Նարեկ Աֆարեան 20
Երէնիկ, Նա Կիլվանէսեան 20
Մարի Մուրապեան 20
Եկեղեցւոյ պայծառութեան Տիգրան Մովսէսեան 2000
»Տէր Ողորմես«ի խնդանօք Սիլվա Քէօճէկեան 50
Ալիս Աւետեան Մընքչեանի 40-ին
Միհրան, Մարկօ Մընքչեան 50
Րիշար, Աշխէն Պուտր 30
Արամ, Լուիզ Նշանեան 50
Զօհրապ, Անի Ջաուչեան 50
Նիքոլա Գապալաի 40-ին
Փօլին, Միթիվ, Մարք Գապալա 300
Պերճ Մելիքեան 50
Կարօ, Մարի Տարմիլեան 25
Ալիս Մասէրէճեան 50
Վարդուհի Կարապետեան 50
Սոնիա Պաժամճեան 25
Լուսի Նաճարեան 25
Մարօ Կոստանեան 25
Հէնրի Ջալգալ, Անահիտ Տօլապճեան 50
Արա, Լուսի Ալեքսանեան 50
Լեւոն, Սիլվիա Նաճարեան 50
Կարապետ, Մարթ Քիւտրեան 30
Տ. եւ Տ. Գարեգին Պարսամեան 100
Հաննա Թաւրոս Հաննա 200
Հայկուհի Վարդանեան 50
Էտուար Ապլէր, Անի Աճմարանի 50
Տօն, Անահիտ Մաղպի 50
Տ. եւ Տ. Պերճ Որդասանճեան 30
Րաֆֆի Գուլումճեանի 40-ին
Սիմոն Գուլումճեան, Իրիս Տոմընդէյն 100
Հիլտա, Անի Իրէկ, Իրէկեան ընտք. 50

Զիւլին Ֆրանկիւլ, ընտք. 50
Տ. եւ Տ. Կարպիս Թիսմանճեան 40
Տ. եւ Տ. Րաֆֆի Ֆրանկիւլ 100
Տ. եւ Տ. Արա Լայէեան 20
Տ. եւ Տ. Ասպետ Պաճաբեան 50
Տ. եւ Տ. Արա Աւետիքեան 50
Տ. եւ Տ. Կի Ռիմէ, 50
Վարդան, Վարդուկ Ճէրահճեան 30
Բըշ. Կարօ Սրկ. Նոխտեան, տիկ. 25
Տ. եւ Տ. Աւետիս Ձեքըէգեան 50
Յակոբ, Մովիկ Կուտեան 30
Սահակ Ճէմալեանի Ա. տարեկիցին, Ճէմալեան, Տօլապճեան, Ջարաքեան, Ֆէնէրճեան գերդաստանաց ննջեցեցոյ
Էլիզա Ճէմալեան, զվք.՝ Գարմէն, Արմէն եւ ընտքենք 100
Վարդգէս Տօլապճեան 50
Հանրի Ջալգալ, Նայիրի Տօլապճեան 100

Րաֆաաթ Պաշուրի 40-ին
Տ. եւ Տ. Րաֆֆի Պաշուր, զվք. 50
Զարուհի Մալոյեան Լրմէ 20
Ժապին Մալոյեան 20
Պետրոս Մալոյեան 30
Լուսին Մալոյեան 20
Տ. եւ Տ. Փէլո Թէրգեան, զվք. 50
Րօսի, Գալար Րամիա 20
Ովսաննա Գուլումճեան 25
Մետաքսիա Տէտէեան 25
Սահակ Քէշէճեանի 6-րդ տարեկիցին, Նաեւ Գէշէճեան, Սուլեան գերդաստանաց ննջեցեցոյ
Րահէլ Գէշէճեան, դուստր 50
Տ. եւ Տ. Մինաս Գէշէճեան, զվք. 20
Արսէն, Նազիկ Փիլապիան 25
Առաքել, Շաքէ Իահակ 20
Ճոնի Արեւեանի 40-ին
Յակոբ, Անի, Մարալ, Արի Արեւեան 50
Րէժիա, Անի Կանիկ 100
Տ. եւ Տ. Ջարեհ Տէրվիշեան 20
Տ. եւ Տ. Գրեգոր Արեւեան 100
Տ. եւ Տ. Անդրեաս Արեւեան, զվք. 100
Ալին Արեւեան, զվք. 100
Jean, Paula Moukartzel 50
Սօսէ Սարաֆեան 100
Պետրոս, Լիզլէթ Ձեքըէգեան, զվք. 40
Յարութիւն, Անճէլ, Մաալէյն, Մարիամ Ֆէնէրճեաններու Հոգւոյ
Յակոբ Նարեկեան 30
Յարութիւն Մարտիրոսեանի 3-րդ տարեկիցին, Գէորգ, Պայծառ Պօղոսեաններու Հոգւոյ
Տ. եւ Տ. Յակոբ Մարտիրոսեան 20
Տ. եւ Տ. Սնպուհ Մարտիրոսեան 20
Պէրպէրեան, Ուաչերեան գերդաստանաց ննջեցեցոյ
Տ. եւ Տ. Գէորգ Ուաչերեան, զվք. 20
Վաղդէն Գաբրիէլեանի Հոգւոյն, Էժօէհի Գաղաթեանի 2-րդ տարեկիցին
Մարի Թոմասեան 50
Մաալէյն Բըրըրեան 50
Հրայր, Մաալէյ Տուշումեան 20
Մեսրոպ, Վերթին, Մակի, Յակոբ Նալպանտեաններու Հոգւոյ
Նազարէթ, Նորա Նալպանտեան, Վաշէ, Թամսար Նալպանտեան 100
Ֆիլիպոսեան, Կոճիկեան, Պալիքեան, Պիճիմէճեան գերդաստանաց ննջեցելոց
Տ. եւ Տ. Գէորգ Արքեան 50
Տ. եւ Տ. Յովհաննէս Կոճիքեան, զվք. 50

Տ. եւ Տ. Երուանդ Արքեան, զվկ.՝ Ալեք-Գալլ 50
Տ. եւ Տ. Կարպիս Ֆիլիպոսեան 50
Ռուբէն, Մարիա Պոյաճեան 50
Ժանօ Ասատուրի Հոգւոյն
Տ. եւ Տ. Յարութ Ասատուր 10

Ս. ԳէՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ԼԱԻԱԼ ՈՐը. ՎԱՐԳԳՅԱՊ ՊԵՐԵՃԻԲՆԱՆԻ մահուան 18-րդ տարեկիցին առթիւ
ԼՈՒՍԻՆ ՊԵՐԵՃԻԲՆԱՆԻ եւ Համայն ՊԵՐԵՃԻԲՆԱՆ, ԻՍՊԻՐԵԱՆ եւ ՏէՐ ՕԶԱՆԷՍԵԱՆ ընտանիքներու ննջեցեանքու յիշատակին։
Տ.Տ. Սարգիս, Մարի Պերեճիքեան եւ Վարդգէս 20
Տ.Տ. Մեսրոպ, Սիլվա Պերեճիքեան եւ Սարթ 40
Տ.Տ. Շահէ, Մահա Պերեճիքեան եւ Բաւրինա, Արիանա 20
Տիկ. Լուսին Պերեճիքեան եւ Արի 20
Տ.Տ. Շիրակ, Էլիզապէթ Պերեճիքեան 20
ՈՐը. ՆԱԶԵԼԻ ՊԱՍՏԱՅԵԱՆԻ մահուան 40-ին առթիւ,
մահացած Լիբանան։
Տիկ. Արտա Գաղանճեան 50
ՈՐը. ՅԱԿՈԲ ԵՒՓՈՒՃԵԱՆԻ մահուան 2-րդ տարեկիցին առթիւ։
Տ.Տ. Սերբը, Արանի Շափուճեան, Տ.Տ. Ժօզէֆ, Զէփիւռ Վանդեան եւ զաւակներ Ամանտա, Մալքըլ, Բրիտափոր 70
Տ.Տ. Արրահաճ Պօլոյիկեան 20
Տ.Տ. Գալիթ ձիւպալեան եւ զվկնք. 20
ՈՐը. ԱՆԳՐԱՆԻԿ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ մահուան 2-րդ եւ ԴՐՎԱՆՏԱ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ մահուան

առաջին տարեկիցներուն առթիւ։
Տ.Տ. Իշխան, Էյօ Լատոյեան 20
Տ.Տ. Յարութ, Մարալ Ապահան 20
Տ.Տ. Յակոբ, Մովիկ Ապահան 20
Տ.Տ. Արրահաճ, Անի Տէր Նիկողոսեան 20
ՈՐը. ՄԻՇԷԼ ԳԱՐԱՄԱՆԵԱՆԻ, ՀԱՄ–ԲԱՐՋՈՒՄ ԳԱՐԱՄԱՆԵԱՆԻ եւ ՎԵՐՈՆԻԲԱ ԳԱՐԱՄԱՆԵԱՆԻ յիշատակին։
Տ.Տ. Քերոր Գարամանեան 20

ՈՐը. ԵՂԻՍԱԲէԹ ՊԶՏԻԿԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին առթիւ։
Տ.Տ. Արրահաճ Պօլոյիկեան 20
Տէր Ողորմես կը խնդրեն
Ռաբեղաշառուհի մը Տէր Ողորմես կը խնդը
արկածէ մը փրկուելու առթիւ 20

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՄՈՒՇԵՂ ԻՇՈԱՆ» ԳՐԱԴԱՐԱՆԻՆ
Իրենց Հօր մահուան տխուր տարեկիցին առթիւ
Ներսէս, Րաֆֆի եւ Վրէժ Հատիտեաններ 50

Ս. ԱՍՏՈՒԱՄԱՄԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ԹՐՈՐԱԹՕ
Նովբրատուութիւններ Ս. Աստուածօին Եկեղեցւոյ
Արամ Գաբրիէլեան 50
Սերա Պոյաճեան 100
Տէր եւ Տիկ. Սիմոն Գորայեան 100
Արմէն եւ Արշօ Աստուրեան 100
Նազարէթ եւ Ջարուհի Բրուտեան 30
Տոքթ. Հովիկ եւ Անիթա Շիթիլեան 5000 ԱՄ
Վարդապաւո Կուրուսեան 80
Տէր եւ Տիկ. Յարութ Մաշըրեան 500
Բապալքեան Ատուրի 40-քին
Շաւարշ եւ Անի Ակինեան 50
Արիս Պապիքեան 20
Սեւան եւ Յարութ Հաճիքեան 30
Կարօ եւ Անի Ակինեան 50
Տէր եւ Տիկ. Յարութ Դանիէլեան 20
Անի Բապալքեան 50
Ռաֆֆի Մարի 25
Պարսումեան Ճօրճի Ա. տարեկից
Ռոդոն Պարսումեան 20
Ներսէս Պարսումեան 20
Տէր եւ Տիկ. Ուաշիկ Մէրճանեան 20
Արքեան՝ Արրահաճի Հոգւոյն
Տէր եւ Տիկ. Զոհրապ եւ Բէկի Պապօղեան 25
Մէլէքեան Ժիրայրի եւ Մէլէմէճեան եւ Մալուռփ գերդաստանի ննջեցեանքու Հոգիներուն
Սեւան եւ Յարութ Տալապեան 50
Ռահֆի Մարի 25
Գալստիան Անդրանիկի Հոգւոյն
Դաւիթ Գալիթեան 100
Մատարճեան Ուաշիկի եօթնօրէքն
Ժանօ եւ Թային Ուաշոյեան 50
Տօլապճեան Մկրտիչի եւ Էժօէհի, Նալբաբեան Լուկասի եւ Իսուհի-ի Հոգիներուն
Ստեփան եւ Յասմիկ Տօլապճեան 50
Եազուպ Սէլինի, Ոսթունի եւ Արմէնի Հոգիներուն
Մուֆիտ եւ Մաալէյն Ապու Համիտ 20
Ժամովեան Մարի-ի 2-րդ տարեկիցին
Ռիթա Պէքարեան 40
Տիշուեան Ներսէսի եւ Լուսինի Հոգիներուն
Յարութ եւ Սեւան Տիշուեան 40
Թիւրպէրեան Յովհաննէսի 40-քին
Պօղոս եւ Մարալ Շաննապեան 20
Գալիթեան Ուաթունի Ա. տարեկիցին
Ալէքս եւ Ժանէթ Տէր Ասադեան 50
Սարգիսեան Արամի, Ոսթունի, Գէորգի, Գրգի, Մկրտիչի, Ռահֆի-ի եւ Անահիտի Հոգիներուն
Աստիկկ Սարգիսեան 250
Հաստատ Աշխիկ եօթնօրէքն
Ժան եւ Ժիլիկ Մոճճեան 20
Հայրապետեան Հայրապետի, Մինասեան Սուրէնի եւ Համայն Հայրապետեանի ննջեցեանքու Հոգիներուն
Սեդա Հայրապետեան 20
Պետրոսեան Արսէնի 3-րդ տարեկիցին
Արմինէ Պետրոսեան եւ զաւակունք 100
Ժերճ եւ Յասմիկ Խըրլաքեան 50
Սոնիկ Ուուրի եւ ընտանիք 50
Սոնիկի եւ Սոնիկ Պուճուքեան 50
Մանա Գահուէճեան 20
Տալիտա Գասպարեան–Գուլումճեան 20

Սրապօնեան Մարի-ի 40-քին
Էսի եւ Ալիս Ռերֆալեան 100
Նուպար եւ Էլէն Ռերֆալեան 100
Մալքըլ եւ Մակի Տին 100
Լուպէր եւ Վիգի Ռերֆալեան 50
Սթօր Ռերֆալեան 50
Տէր եւ Տիկ. Տիգրան Ուաչերեան 100
Անի Ուոտապէրեան 200
Էլիզ Պուտադեան 20
Յակոբ եւ Լուսին Պուտադեան 25
Սէրայտաբեան Օննիկի եւ Զուարթի, Մատնեան Նազարէթի եւ Արշալոյսի Հոգիներուն
Մուշկ եւ Պերճուհի Սէրայտաբեան 50
Էլիզապէթ Գրեգրեան 20
Զուարթ Գարբիեան 20
Թային Ջիլինկիրեան 30
Պորադեան Մէրէ-ի Ա. տարեկիցին
Արթթօ եւ Սիլվա Սէրգիս 100
Աթիթարեան Պերճի Հոգւոյն
Ատուլ Աթիթարեան 20
Արթիճեան Ակիսի, Ալֆար Մորիսի եւ Ռէսթրուեան Սարգիսի Հոգիներուն
Բէկի Ռէստուկեան 50
Միլզայեան Շաքէ-ի եւ Վարդանի Հոգիներուն
Սահակ եւ Արաքսի Ուարման 20
Պապեան Գալուստի մահուան 40-քին
Տիկ. Յասմիկ պապեան եւ զաւակունք 300
Սասուն եւ Նայիրի Ասադեան 50
Իրւզանդ եւ Յօրա Վարդանեան 40
Վրէժ Մաալոյեան 50
Յասմիկ Պոյաճեան 30
Սեդա Գուլումճեան 100
Ռահէլ Քէշէճեան 20
Յակոբ եւ Հովիսիմէ Գասարճեան 30
Սերա Պոյաճեան



Innové
pour exalter

LIQUIDATION TOP CHRONO DE NISSAN ROGUE S À TRACTION AVANT

GRUPE NISSAN
GABRIEL



Rogue SL illustré*

Location à partir de
254 \$* par mois, avec
comptant initial de 2 495 \$.

C'EST COMME PAYER
PENDANT
59\$** /SEM **39** MOIS

OU OBTENEZ

4 000\$ DE RABAIS*

AU FINANCEMENT À UN TAUX
STANDARD SUR LES ROGUE SL.

UNE ALLOCATION DE **20 000 KM/AN**,
AVEC KILOMÉTRAGE ADDITIONNEL À **0,10 \$/KM**



Sentra SR
Turbo illustrée*

SENTRA SV À BOÎTE AUTOMATIQUE

Location à partir de
214 \$* par mois, avec
comptant initial de 1 195 \$.

C'EST COMME PAYER
49\$** /SEM **39** MOIS

UNE ALLOCATION DE **20 000 KM/AN**,
AVEC KILOMÉTRAGE ADDITIONNEL À **0,10 \$/KM**



**PNEUS D'HIVER
SANS FRAIS***
(valeur maximale de 840 \$)

NISSAN
GABRIEL
JEAN-TALON

3500, rue Jean-Talon O., Montréal, QC H3R 2E8
514 509-7777 | nissangabrieljeantal.com

◀ **OUVERT LES SAMEDIS** ▶

NISSAN
GABRIEL
ANJOU

7010, boul. Henri-Bourassa E., Anjou, QC H1E 7K7
514 324-7777 | nissangabrielanjou.com

◀ **OUVERT LES SAMEDIS** ▶

Offres en vigueur du 1er septembre au 2 octobre 2017. Les offres de location sont basées sur une allocation de 20 000 km / an (allocation totale de 65 000 km pour un terme de 39 mois) avec kilométrage additionnel à 0,10 \$ / km. Le premier paiement est requis à la signature du contrat. Les frais d'inscription auprès du RDPRM et les frais d'agent pour l'inscription (jusqu'à 77 \$ au total) ne sont pas compris et sont payables à la signature du contrat. Taxes, immatriculation, droits spécifiques sur les pneus neufs (15 \$) et assurances en sus, et exigés à la signature du contrat. * L'offre à la location des modèles illustrés 2017 suivants : Sentra SR Turbo à boîte CVT / Micra SR à boîte automatique / Rogue SL pour un terme de 39 / 39 / 39 mois équivaut à 39 / 39 / 39 mensualités de 298 \$ / 247 \$ / 457 \$ (avec 0 \$ en comptant initial) lorsqu'ils sont loués par l'entremise de NCF. ** Les paiements ne peuvent être faits hebdomadairement. Ils sont uniquement mentionnés à titre informatif. + L'offre des pneus d'hiver s'applique aux clients admissibles à l'achat au comptant, au financement ou à la location des modèles Sentra / Micra 2017, immatriculés et livrés entre le 1 septembre et le 2 octobre 2017, et est valable pour les modèles de pneus sélectionnés. Les pneus illustrés le sont à titre indicatif seulement. L'installation, les jantes et la mise au point des pneus ne sont pas incluses dans cette offre. Cette offre n'a pas de valeur d'échange au comptant. La valeur maximale des pneus d'hiver couverte par le concessionnaire est de 840 \$ / 580 \$, taxes en sus, pour les modèles Sentra / Micra 2017. Les concessionnaires peuvent fixer leurs propres prix. Si le client choisit des pneus d'hiver d'une valeur plus élevée, il devra payer la différence. * Prix de vente à partir de 22 063 \$ / 31 563 \$ pour les modèles 2017 : Qashqai S / Qashqai SL Platine illustré. Taxes, les droits spécifiques sur les pneus neufs, immatriculation et assurances en sus. + Le rabais de 4 000 \$ est applicable au financement à l'achat à un taux standard, uniquement par l'entremise de NCF, d'un Rogue SL 2017. Ce rabais ne peut être combiné à un taux de location ou de financement subventionné ni à aucune autre offre et il sera déduit du prix de vente négocié avant les taxes. Les offres sont sous réserve de l'approbation de crédit par Nissan Canada Finance ; elles peuvent être modifiées, prolongées ou annulées sans préavis. Modèles illustrés à titre indicatif. Visitez www.choisisseznissan.ca ou votre concessionnaire Nissan Gabriel St-Léonard ou Nissan Gabriel Anjou pour tous les détails. Des conditions s'appliquent. © Nissan Canada inc., 2017.



BARRY KAREN GARO KAZANDJIAN



EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

ÉQUIPE KAZANDJIAN .com

CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIER RE/MAX AU MONDE
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

KAZANDJIAN REALTY .com

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5